Հավելված N 2
ՀՀ կառավարության 2024 թվականի
նոյեմբերի 15-ի N 1803-Լ որոշման

# ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

## (2024-2026 թթ.)

**Ուղղություն 1՝ Ներքին գործերի նախարարության ձևավորմամբ ոստիկանության կազմակերպաիրավական ձևի, կառավարման մոդելի փոփոխությունը, արտաքին միասնական նկարագրի ձևավորումն ու ծառայության ֆունկցիոնալ զարգացումը**

**Խնդիր՝ Ներքին գործերի նախարարության ներքին թվային կառավարման բացակայություն, Ոստիկանության վերջնական ձևավորման ընթացիկ փուլ**

**Թիրախ՝ Քաղաքացիական վերահսկողության ներքո գործող Ոստիկանության կառուցվածքային և ֆունկցիոնալ համակարգի վերջնական ձևավորում, Նախարարություն-Ոստիկանություն ներքին արդյունավետ կառավարում**

| N | Գործողություն | Թիրախն ըստ ժամկետի | | | Համակատարող | Արդյունք/Վերստուգիչ ցուցանիշ | Ֆինանսա-վորման աղբյուր |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | **2024** | **2025** | **2026** | | | |
| 1. | Ներքին գործերի նախարարության ներքին թվային կառավարման համակարգի գործարկում | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Մրցույթի միջոցով ձեռք են բերվել ծառայություն-ներ՝ ՆԳՆ-ի ֆունկցիո-նալ ուսումնասիրության մասին հաշվետվության, ներքին արդյունավետ կառավարման նպատա-կով ՆԳՆ-ի կառուցված-քային ստորաբաժա-նումների միջև, ՆԳՆ-ում և վերջինիս ենթակա | Առաջին կիսամյակ՝<br><br>Հաշվետվություն-ներն ու մատրիցը մշակվել են:<br><br>Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Հաշվետվու-թյուններն ու մատրիցը | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Ներքին թվային կառավարման համակարգը գործարկվել է: | ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերու-թյան նախարարություն | 1. Մշակվել և Տեղեկատվական համա-կարգերի կառավարման խորհրդում քննարկվել է ՆԳՆ-ի ֆունկցիոնալ ուսումնասիրության մասին հաշվետվությունը:<br><br>2. Մշակվել և Տեղեկատվական համա-կարգերի կառավարման խորհրդում քննարկվել է ներքին արդյունավետ կառավարման նպատակով ՆԳՆ-ի կառուցվածքային ստորաբա-ժանումների միջև, ՆԳՆ-ում և վերջինիս ենթակա պետական | Օրենքով չարգելված միջոցներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | պետական մարմին-ների միջև տվյալների փոխանակման նպատակով բիզնես գործընթացների վերասահմանման մասին հաշվետվու-թյան, ինչպես նաև ՆԳՆ-ի, վերջինիս ենթակա պետական մարմինների և կառուցվածքային ստորաբաժանումների միջև ներքին համա-գործակցության համար բիզնես գործընթացները նկարագրող մատրիցի մշակման համար: | քննարկվել են Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդում:<br><br>2. Մշակվել է ներքին թվային կառավարման համակարգի տեխնիկական առաջադրանքը: | | | մարմինների միջև տվյալների փոխանակման նպատակով բիզնես գործընթացների վերասահմանման մասին հաշվետվությունը:<br><br>3. Մշակվել և Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդում քննարկվել է ՆԳՆ-ի, վերջինիս ենթակա պետական մարմինների և կառուցվածքային ստորաբաժանումների միջև ներքին համագործակցության համար բիզնես գործընթացները նկարագրող մանրամասն մատրիցը:<br><br>4. Համակարգը գործարկվել է փուլային սկզբունքով և առնվազն ներառում է մարդկային ռեսուրս-ների կառավարման, ֆինանսա-բյուջետային, պահեստի կառավարման բլոկերը:<br><br>Ելակետային՝ 0: | |
| 2. | Ներքին գործերի նախարարության կողմից մատուցվող հանրային ծառայությունների ծավալների և որակի պարբերական գնահատում, դրանց պարզեցում և թվայնացում | Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Մշակվել և ընդունվել է հանրային ծառայությունների մատուցման որակի չափորոշիչները սահմանող՝ ՆԳ նախարարի հրամանը:<br><br>2. Իրականացվել է հանրային ծառայությունների | Առաջին կիսամյակ՝<br><br>1. ՆԳՆ և ոստիկանության կողմից մատուց-վող ծառայություն-ների բիզնես պրոցեսների գնահատումների հիման վրա կազմվել է զեկույց, որը ներառում է | Առաջին կիսամյակ՝<br><br>Իրականացվել է հանրային ծառայությունների մատուցման որակի վերա-բերյալ 1 հանրային հարցում: | - | 1. Հանրային ծառայությունների մատուցման որակի չափորոշիչները սահմանող՝ ՆԳ նախարարի հրամանն ընդունվել է:<br><br>2. ՆԳՆ ծառայությունների մատուց-ման որակի վերահսկողության վարչության 2025, 2026 և 2027 թվականների տարեկան ծրագրերը հաստատող՝ Ներքին գործերի նախարարի հրամաններն ընդունվել են: Ապահովվել է տարեկան ծրագրերի մշակման | Օրենքով չարգելված միջոցներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | մատուցման որակի վերաբերյալ 1 հանրային հարցում:<br><br>3. Մշակվել և հաստատվել է ՆԳՆ ծառայությունների մատուցման որակի վերահսկողության վարչության 2025 թվականի տարեկան ծրագիրը: | դրանց բիզնես պրոցեսների պարզեցման, ավելորդ գործողություն-ների բացառման, թվայնացման վերաբերյալ առաջարկներ:<br><br>2. Իրականացվել է հանրային ծառա-յությունների մա-տուցման որակի վերաբերյալ 1 հանրային հարցում:<br><br>Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Զեկույցում ներ-կայացված առա-ջարկների առնվազն 30%-ը կատարվել է:<br><br>2. Գնահատվել են ՆԳՆ և Ոստիկա-նության կողմից մատուցվող ծառայությունները, մշակվել է դրանք Ոստիկանու-թյունից ՆԳՆ տեղափոխելու կամ արտա-պատվիրակելու | Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Իրականացվել է հանրային ծառայությունների մատուցման որակի վերաբերյալ 1 հանրային հարցում:<br><br>2. Մշակվել և հաստատվել է ՆԳՆ ծառայու-թյունների մատուցման որակի վերահսկո-ղության վարչու-թյան 2027 թվա-կանի տարեկան ծրագիրը: | | ստանդարտացումն ու կայունությունը:<br><br>Ելակետային՝ 1, 2024 թվականի տարեկան ծրագիրը հաստատվել է:<br><br>3. Մշակվել և ՆԳՆ պաշտոնական կայքում հրապարակվել է ՆԳՆ և ոստիկանության կողմից մատուց-վող ծառայությունների բիզնես պրոցեսների պարզեցման, ավելորդ գործողությունների բացառման, թվայնացման վերաբերյալ առաջարկներ ներառող զեկույցը՝ Բարձր տեխնոլոգիական արդյունա-բերության նախարարության Ծառայությունների թվայնացման ուղեցույցին համապատասխան:<br><br>4. Զեկույցով ներկայացված առաջարկները կազմվել են՝ հիմք ընդունելով առնվազն 3 պետության լավագույն փորձը, որոնք ներկայացված են զեկույցում:<br><br>5. Զեկույցով ներկայացված առաջարկների առնվազն 30%-ը կատարվել է:<br><br>Ելակետային՝ 0:<br><br>6. Մատուցվող ծառայությունները Ոստիկանությունից ՆԳՆ տեղա-փոխելու կամ արտապատվիրակելու վերաբերյալ առաջարկություններ ներառող զեկույցը մշակվել է և հրապարակվել է ՆԳՆ պաշտոնական կայքում: | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | վերաբերյալ առաջարկություններ ներառող զեկույց:<br><br>3. Իրականացվել է հանրային ծառայությունների մատուցման որակի վերաբերյալ 1 հանրային հարցում:<br><br>4. Մշակվել և հաստատվել է ՆԳՆ ծառայությունների մատուցման որակի վերահսկողության վարչության 2026 թվականի տարեկան ծրագիրը: | | | 7. Զեկույցում ներկայացված առաջարկները հիմնվել են առնվազն 3 պետության լավագույն փորձի վրա, որը ներառվել է զեկույցում:<br><br>Ելակետային՝ 6 ծառայություն մատուցվում է ՆԳՆ կողմից, 36՝ Ոստիկանության:<br><br>8. ՆԳՆ պաշտոնական կայքում հրապարակվել են հանրային ծառայությունների մատուցման որակի գնահատման 5 հարցման արդյունքներն ամփոփող զեկույցներ:<br><br>Ելակետային՝ 0:<br><br>9. Հարցումների արդյունքում 2026 թվականին գրանցվել է ծառայություն ստացողների բավարվածության աճ 10%-ով՝ ի համեմատ 2024 թվականի: | |
| 3. | Ոստիկանության կառուցվածքի և ֆունկցիոնալի ավարտական տեսքի ապահովում | Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Գործարկվել է Քրեական ոստիկանությունը՝ նոր կառուցվածքով և ֆունկցիոնալով: | Առաջին կիսամյակ՝<br><br>Գործարկվել է Համայնքային ոստիկանությունը՝ նոր կառուցվածքով և ֆունկցիոնալով: | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնի ֆունկցիոնալը տեղափոխվել է ՆԳՆ և ՆԳՆ | | 1. Ոստիկանությունը գործում է նոր կառուցվածքով և ֆունկցիոնալով՝ ներառելով սույն ԳԾ-ի 6-րդ ուղղությանը համապատասխան գործարկված քրեական ոստիկանությունը, սույն ԳԾ-ի 7-րդ ուղղությանը համապատասխան գործարկված Համայնքային ոստիկանությունը և սույն ԳԾ-ի 8-րդ ուղղությանը համապատասխան գործարկված Ոստիկանության | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Գործարկվել է Ոստիկանության գվարդիան՝ նոր կառուցվածքով և ֆունկցիոնալով: | կազմում ձևավորվել է մեկ միասնական օպերատիվ կառավարման կենտրոն: | | գվարդիան:<br><br>Ելակետային՝ 2023 թվականին Պարեկային ծառայությունն ամբողջությամբ գործարկվել է, 2024 թվականի առաջին եռամսյակում Ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության գործունեությունն ամբողջությամբ  դադարեցվել է, իսկ ֆունկցիոնալը տեղափոխվել է ՆԳՆ միգրացիայի և քաղաքա-ցիության ծառայություն, 2024 թվականի առաջին եռամսյակում Ոստիկանության աջակցող ֆունկցիա սպասարկող ստորաբաժանումները լուծարվել են, իսկ ֆունկցիոնալը տեղափոխվել է ՆԳՆ:<br><br>2. ՆԳՆ կազմում ձևավորվել է հանրապետական մեկ միասնական օպերատիվ կառավարման կենտրոն՝ սույն ԳԾ-ի 5-րդ ուղղությանը համապատասխան:<br><br>Ելակետային՝ օպերատիվ կառավարման կենտրոնը գործում է Ոստիկանության կազմում: | |
| 4. | Ոստիկանության շենքային համալիրի գնահատում, ձերբակալվածներին պահելու վայրերի (ՁՊՎ) օպտիմալացում | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Իրականացվել է ձերբակալված անձանց պահելու 8 վայրերի օպտիմալացում: | Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Ավարտին է հասցվել ձերբա-կալված անձանց պահելու  վայրերի օպտիմալացումը՝ ևս առնվազն 1 | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Վերանորոգվել է ձերբակալված անձանց պահելու վայրերի առնվազն 30%-ը: | ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտե<br><br>ՀՀ ֆինանսների նախարարություն | 1. Ոստիկանության շենքային համալիրի պայմանների վերաբերյալ առաջարկությունները ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ:<br><br>Ելակետային՝ 0: | Տարեկան բյուջեով նախատես-ված միջոցներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՁՊՎ-ի օպտիմալացմամբ:<br><br>2. Իրականացվել է Ոստիկանության շենքային համալիրի պայմանների գնահատում, մշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ են ներկայացվել դրանց բարելավման առաջարկություն-ներ: | | | 2. Ձերբակալված անձանց պահելու վայրերի օպտիմալացումը կատարվել է միջնաժամկետ վիճակագրական տվյալների հենքով: Օպտիմալացման արդյունքում կրճատվել է ՁՊՎ-ների 30%-ը:<br><br>Ելակետային՝ 33 ՁՊՎ (2023թ.):<br><br>3. Վերանորոգվել է ձերբակալված անձանց պահելու վայրերի առնվազն 30%-ը:<br><br>Ելակետային՝ 0: | |
| 5. | Ոստիկանության արտաքին նկարագրի բարելավում, միասնականացում | | Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Հաստատվել է ՆԳ նախարարի հրամանը, որով սահմանվում են ոստիկանության ծառայողի համա-զգեստի որակի և դիզայնի միասնա-կան չափանիշները:<br><br>2. Հաստատվել է Ոստիկանության տրանսպորտային միջոցների | Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Սահմանված չափանիշներին համապատաս-խան համազգեստ-ները տրամադրվել են ոստիկանու-թյան բոլոր ծառայողներին:<br><br>2. Պետական գնումների միջոցով ձեռք են բերվում տեխնիկական չափորոշիչներին | ՀՀ քաղաքաշինության կոմիտե<br><br>ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտե | 1. Ոստիկանական համազգեստ-ների որակի և դիզայնի միասնական չափանիշներ սահմանող՝ ՆԳ նախարարի հրամանն ընդունվել է:<br><br>2. Ոստիկանության բոլոր ծառայողներն ապահովված են սահմանված չափանիշներին համապատասխան համազգեստներով:<br><br>Ելակետային՝ միայն Պարեկային ծառայությունն է ապահոված նոր որակի և դիզայնի համազգեստով:<br><br>3. Ոստիկանության տրանսպորտային միջոցների | Լրացուցիչ ֆինանսա-վորում չի պահանջ-վում |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | տեխնիկական և միասնական արտաքին դիզայնի չափորոշիչները սահմանող՝ ՆԳ նախարարի հրամանը: | համապատաս-խանող տրանսպորտային միջոցներ:<br><br>3. Մշակվել է ՆԳՆ ամբողջական ենթակառուց-վածքի լրկացիոն քարտեզը:<br><br>4. Տիպային մոդելով նոր ենթակառուց-վածքի ստեղծման մրցութային փաթեթը մշակվել է: | | տեխնիկական և միասնական արտաքին դիզայնի չափանիշները սահմանվել են ՆԳ նախարարի հրամանով:<br><br>4. Ոստիկանության նոր ձեռք բերվող տրանսպորտային բոլոր միջոցները համապատասխանում են սահմանված չափանիշներին:<br><br>5. ՆԳՆ ամբողջական ենթակառուցվածքի, այդ թվում՝ Ոստիկանության, լրկացիոն քարտեզը պատրաստ է:<br><br>Ելակետային՝ 0:<br><br>6. Մշակվել է ժամանակակից ճարտարապետական լուծումներով և ֆունկցիոնալ բարձր արդյունավետությամբ տիպային մոդելով նոր ենթակառուցվածքի ստեղծման մրցութային փաթեթ:<br><br>Ելակետային՝ առկա է տիպային մոդելի էսքիզ: | |
| **Ուղղություն 2՝ Մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարում և բարեվարքության ամրապնդում**<br><br>**Խնդիր՝ Մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի կարիքների ուսումնասիրման վրա հիմնված ծրագրի և կատարողականի գնահատման համակարգի բացակայություն, ոստիկանությունում ծառայության գրավչության ոչ բավարար մակարդակ, բարեվարքության խնդիրներ**<br><br>**Թիրախ՝ Մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարման, ոստիկանությունում ծառայության գրավչության բարձրացման և կոռուպցիայի կանխարգելման գործիքակազմի ամրապնդում** | | | | | | | | |
| 1. | ՆԳՆ մարդկային ռեսուրսների կառավարման գործիքակազմի | | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | հզորացում | | | | | | |
| | 1.1. ՆԳՆ մարդկային ռեսուրսների կարիքների համապարփակ գնահատում՝ ապացուցահեն, գենդերարձագանքող (gender responsive) քաղաքականության մշակման նպատակով | | Առաջին կիսամյակ՝<br><br>Իրականացվել է կարիքների գնահատում, որի հիման վրա մշակվել է մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտի բարեփոխում-ներին ուղղված առաջարկներ ներառող զեկույց: | | ՀՀ քաղաքացիական ծառայության գրասենյակ | 1. Մշակվել և ՆԳՆ պաշտոնական կայքում հրապարակվել է ՆԳՆ մարդկային ռեսուրսների կառա-վարման վարչության և ոստիկա-նության կադրային կարիքների գնահատումը ներառող զեկույցը:<br><br>2. Կարիքների գնահատումը կատարվել է միջազգային լավագույն փորձի հիման վրա և մշակված զեկույցը ներառում է արձանագրված խնդիրների, այդ թվում՝ գենդերային հիմքով առկա խնդիրների լուծման առաջարկներ:<br><br>Ելակետային՝ 0: | Օրենքով չարգելված միջոցներ |
| | 1.2. ՆԳՆ մարդկային ռեսուրսների կառավարման գործողությունների համալիրի կենսագործում | | Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Ընդունվել է մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտի բարեփոխումների աշխատանքային ծրագիրը:<br><br>2. Աշխատան-քային ծրագրի հիման վրա և Հայաստանի Հանրապետու-թյան պետական | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Աշխատանքային ծրագրի հիման վրա և Հայաստանի Հանրապետու-թյան պետական իշխանության մարմիններում աշխատանքային ծրագրերի կազմման կարգի համաձայն մշակվել և ընդունվել է ՆԳՆ մարդկային | ՀՀ քաղաքացիական ծառայության գրասենյակ | 1. Մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտի բարեփո-խումների աշխատանքային ծրագիրը հաստատող Ներքին գործերի նախարարի հրամանն ընդունվել է:<br><br>2. Նախագծի վերաբերյալ անցկացվել է առնվազն 4 հանրային քննարկում, դրանց շրջանակներում ներկայացված առաջարկների առնվազն 40%-ն ընդունվել է:<br><br>3. Հաստատված աշխատանքային ծրագրում ներառված է կարիքների գնահատման զեկույցով ներկայացված առաջարկների առնվազն 40%-ը: | Օրենքով չարգելված միջոցներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | իշխանության մարմիններում աշխատանքային ծրագրերի կազմման կարգի համաձայն մշակվել և ընդունվել է ՆԳՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչության 2026 թվականի աշխատանքային տարեկան ծրագիրը: | ռեսուրսների կառավարման վարչության 2027 թվականի աշխատանքային տարեկան ծրագիրը: | | 4. Աշխատանքային ծրագիրը ներառում է գենդերարձագանքող միջոցառումներ, ինչպես նաև ոստիկանության ծառայողների աշխատանք-կյանք հավասարակշռության հաստատման հետ կապված խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ:<br><br>Ելակետային՝ 0:<br><br>5. Աշխատանքային ծրագրի հենքով և ՀՀ պետական իշխանության մարմիններում աշխատանքային ծրագրերի կազմման կարգի համաձայն մշակված ՆԳՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչության 2026 և 2027 թվականների աշխատանքային տարեկան ծրագրերը հաստատվել են:<br><br>Ելակետային՝ 0: | |
| 2. | Ոստիկանությունում որակյալ կադրերի հավաքագրման (ներգրավման) պլանի ներդնում՝ միտված կոռուպցիոն ռիսկերից զերծ գործընթացով կարող կադրերի հայտնաբերմանը և ընդունելությանը | | Առաջին կիսամյակ՝<br><br>Մշակվել է կադրերի ներգրավման, Ոստիկանությունում կադրերի հոսունության տեմպերը, շարժը գնահատող զեկույց: | Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Մշակվել են առցանց ուսուցման (e-learning) գործիքներ:<br><br>2. Իրականացվել են ՆԳՆ մարդկային ռեսուրսների | ՀՀ քաղաքացիական ծառայության գրասենյակ | 1. Զեկույցը մշակվել և հրապարակվել է ՆԳՆ պաշտոնական կայքում և ներառում է կադրերի ներգրավման մեթոդաբանության լավարկման վերաբերյալ առաջարկներ: Ուսումնասիրությունը հիմնվել է միջազգային փորձի և առնվազն 3 պետության լավագույն փորձի վրա, որոնք արտացոլվել են զեկույցում:<br><br>2. Մշակվել և հաստատվել է կադրերի հավաքագրումը և կադրային շարժը վերլուծելու | Օրենքով չարգելված միջոցներ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Զեկույցի հիման վրա մշակվել են կադրային հավաքագրման և կադրային շարժը վերլուծելու մեթոդաբանու-թյունը և Ոստիկանությու-նում կադրերի հավաքագրման (ներգրավման) պլանը:<br><br>2. Մեթոդաբա-նության և կադրերի հավաքագրման պլանի հիման վրա մշակվել և հաստատվել են ՆԳՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչության անձնակազմի վերապատրաստման նյութեր: | կառավարման վարչության աշխատակիցների վերապատրաս-տումներ:<br><br>3. Իրականացվել է կադրային շարժի պարբերական վերլուծություն: | | մեթոդաբանությունը, որը նախատեսում է կադրային շարժի պարբերական վերլուծություն՝ առնվազն 6 ամիսը 1 անգամ:<br><br>3. Մշակվել և հաստատվել է կադրերի հավաքագրման (ներգրավման) պլանը:<br><br>4. Կադրային շարժի վերլուծության վերաբերյալ կազմվել է առնվազն 2 զեկույց:<br><br>5. Վերապատրաստվել է ՆԳՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչության անձնակազմի առնվազն 70%-ը, ընդ որում՝ ղեկավար կազմի 100%-ը:<br><br>6. Վերապատրաստման արդյունքներով իրականացված գիտելիքի գնահատման արդյուն-քում վերապատրաստվածները դրսևորել են առնվազն 75% իմացություն:<br><br>7. Առցանց ուսուցման (e-learning) գործիքները մշակվել և գործարկվել են:<br><br>Ելակետային՝ 0: | |
| 3. | Ոստիկանությունում ծառայության գրավչության բարձրացում | | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 3.1. Ոստիկանության ծառայողների կատարողականի գնահատման համակարգի ներդրում | | Առաջին կիսամյակ՝<br><br>Մշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Ոստիկանություն ում ծառայության մասին» օրենքում փոփոխություն-ների նախագիծը, որով նախատես-վում են ոստիկա-նության ծառայող-ների կատարողա-կանի գնահատ-ման ինստիտուտը և կատարողա-կանի գնահատ-ման ցուցիչները սահմանելու լիազորող նորմը:<br><br>Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. «Ոստիկա-նությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություն-ների նախագիծն արժանացել է Կառավարության հավանությանը: | Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Իրականացվել է ոստիկանության բոլոր ծառայող-ների կատարո-ղականի գնահատում:<br><br>2. Ծառայողների առաջխաղացումն ապահովվում է կատարողականի գնահատման արդյունքներով: | ՀՀ քաղաքացիական ծառայության գրասենյակ | 1. Զեկույցը մշակվել և հրապա-րակվել է ՆԳՆ պաշտոնական կայքում և ներառում է ոստիկա-նության ծառայողների կատարո-ղական գնահատման համար արդյունավետ և թիրախային լուծումներ: Ուսումնասիրությունը հիմնվել է միջազգային փորձի և առնվազն 3 պետության լավագույն փորձի վրա, որոնք արտացոլվել են զեկույցում:<br><br>2. «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխությունների նախագծին հավանություն տալու վերաբերյալ Կառավարության որոշումն ընդունվել է:<br><br>3. Զեկույցի  հիման վրա կատարո-ղականի գնահատման ցուցիչները սահմանող՝ Ներքին գործերի նախարարի հրամանն ընդունվել է:<br><br>4. Ոստիկանության բոլոր ծառայողների կատարողականի պարտադիր գնահատումը ներդրված է:<br><br>5. Ոստիկանության ծառայողների 100%-ը անցել է կատարողականի գնահատում:<br><br>Ելակետային՝ 0:<br><br>6. Կատարողականի գնահատման արդյունքների հիման վրա | Օրենքով չարգելված միջոցներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 2. Մշակվել և հաստատվել են կատարողականի գնահատման ցուցիչները: | | | կայացվում են ծառայողների առաջխաղացման որոշումները:<br><br>Ելակետային՝ 0: | |
| | 3.2. Ոստիկանության սոցիալական երաշխիքների պատշաճ համակարգի ապահովում | | Առաջին կիսամյակ՝<br><br>Իրականացվել է Ոստիկանության ծառայողների վարձատրության և սոցիալական երաշխիքների համադրված իրավիճակային վերլուծություն, որի արդյունքներով կազմվել է զեկույց:<br><br>Երկրորդ կիսամյակ՝<br><br>Իրականացվել է ատեստացիայի արդյունքների մոնիթորինգ, որի արդյունքներով մշակվել է ատեստացիայի գործընթացի բարելավվմանն ուղղված առաջարկներ ներառող զեկույց: | Առաջին կիսամյակ՝<br><br>Ոստիկանության բյուջետային հայտով հաստատ-վել են Ոստի-կանության ծառայողների վարձատրության և սոցիալական երաշխիքների բարելավման վերաբերյալ համապատաս-խան առաջարկ-ները: | ՀՀ ֆինանսների նախարարություն | 1. Ատեստացիայի արդյունքների մոնիթորինգի հիման վրա մշակել է մոնիթորինգի շրջանակներում արձանագրված խնդիրները ներկայացնող զեկույց: Զեկույցը ներառում է նաև ատեստացիայի գործընթացի բարելավմանն ուղղված առաջարկներ, որոնք հիմնված են նաև ատեստավորման հանձնաժողովի անդամների, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ արված հարցազրույցների արդյունքների վրա:<br><br>Ելակետային՝ 0:<br><br>2. Ոստիկանության ծառայողների վարձատրության և սոցիալական երաշխիքների համադրված իրավիճակային վերլուծությունը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ:<br><br>3. Ուսումնասիրության արդյունքներով Կառավարությանն առաջարկություններ են ներկայացվել Ոստիկանության տարեկան բյուջետային հայտերի շրջանակներում վարձատրության և | Տարեկան բյուջեով նախատես-ված միջոցներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | սոցիալական երաշխիքների բարելավման վերաբերյալ: | |
| | 3.3. Ոստիկանության ծառայողի դիմակայուն նկարագրի ապահովում | | Առաջին կիսամյակ՝<br><br>Ընդունվել է ոստիկանության ծառայողների բժշկական զննության նոր կարգը և այն առավելագույնս նպաստում է ոստիկանական աշխատանքի համար կարող կադրերի հավաքագրմանը:<br><br>Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Մշակվել և Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Ոստիկանություն ում ծառայության մասին» օրենքում փոփոխություն-ների նախագիծը, որով նախատես-վում է ոստիկանու-թյան ծառայողի բժշկական սպասարկումը | Առաջին կիսամյակ՝<br><br>1. «Ոստիկա-նությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ ի նախագիծն արժանացել է Կառավարության հավանությանը:<br><br>2. Մշակվել է ծառայողներին հոգեբանական աջակցության տրամադրման հայեցակարգը:<br><br>Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Հայեցա-կարգային լուծումները ներդրվել են պիլոտային կարգով:<br><br>2. Պիլոտային ծրագրի արդյունքներով՝ ընտրվել և | ՀՀ առողջապահության նախարարություն | 1. Ոստիկանության ծառայողների բժշկական զննության անցկացման կարգը հաստատվել է Կառավարության կողմից:<br><br>Ելակետային՝ Կառավարության գործող որոշում, որը 2023 թվականին ենթարկվել է հատվածային փոփոխության ծառայողներին ներկայացվող հասակի և քաշի պահանջների մասով:<br><br>2. Բժշկական սպասարկումը Առողջապահության նախարարությանը՝ որպես ոլորտային մասնագիտացված կառույցի, վերապահող օրենսդրական փոփոխությունների նախագծին հավանություն տալու Կառավարության որոշումն ընդունվել է:<br><br>Ելակետային՝ Ոստիկանության ենթակայություն:<br><br>3. Ծառայողներին հոգեբանական աջակցության տրամադրման հայեցակարգը հաստատվել է և հիմնված է ծառայության առանձնահատկությունների հաշվառման, ինչպես նաև առնվազն 3 պետության լավագույն փորձի վրա, որը ներառվել է հայեցակարգում: | Օրենքով չարգելված միջոցներ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | վերապահել Առողջա-պահության նախարարու-թյանը: | գործարկվել է հոգեբանական աջակցության մեխանիզմը: | | 4. Գործարկվել է ոստիկանության ծառայողների հոգեբանական աջակցության մեխանիզմը: Հոգեբանական աջակցություն է ստանում ծառայողների առնվազն 20%-ը (որոշարկված ըստ կատարողականի գնահատման): | |
| 4. | Ոստիկանությունում կանանց ներգրավման խթանում | | | | | | |
| | 4.1. Ոստիկանության ծառայության մեջ կանանց ներգրավման խթանմանն ուղղված քաղաքականության ամբողջականացում | | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Իրականացվել է ոստիկանության համակարգում կանանց ներգրավվածու-թյան և այս առնչությամբ առկա խնդիրների ուսումնասիրությու ն, որի հիման վրա մշակվել է վեր հանված խնդիր-ների հաղթահար-ման վերաբերյալ առաջարկություններ ներառող զեկույց: | Առաջին կիսամյակ՝<br><br>Զեկույցի հիման վրա մշակվել և հաստատվել է Կանանց ներգրավ-վածության խթանման միջգերատես-չական գործո-ղությունների ծրագիրը:<br><br>Երկրորդ կիսամյակ՝<br><br>Գործողություն-ների ծրագրով նախատեսված, 2026 թվականին կատարման ենթակա գործո-ղությունների | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն,<br><br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,<br><br>ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ (համաձայնու-թյամբ) | 1. Զեկույցը մշակվել և հրապա-րակվել է ՆԳՆ պաշտոնական կայքում և ներառում է ոստիկա-նության համակարգում ըստ ծառայության տարբեր աստի-ճանների և պաշտոնների կանանց ներգրավվածության, կոնկրետ պաշտոններում կամ ստորաբա-ժանումներում կանանց թերներկայացվածության ուսումնասիրություն, ինչպես նաև այս առնչությամբ առկա քաղաքա-կանության ու գործելակերպի և այն կարգավորումների կամ քաղա-քականությունների վերլուծություն, որոնք խոչընդոտում են կանանց ծառայությունում ներգրավմանը: Ուսումնասիրությունը կատարվել է՝ հիմք ընդունելով ոստիկանու-թյունում կանանց ներգրավման վերաբերյալ միջազգային չափանիշները և առնվազն 3 պետության լավագույն փորձը, որոնք ներառվել են զեկույցում: | Օրենքով չարգելված միջոցներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | առնվազն 80%-ը կատարվել է: | | Ելակետային՝ ծառայության անցնելու համար քաշի և հասակի վերաբերյալ պահանջների վերանայում, թիրախային քննարկումների անցկացում, մեկ լայնամասշտաբ իրազեկման արշավի և մեկ նպատակային ընդունելության իրականացում:<br><br>2. Կանանց ներգրավվածության խթանման միջգերատեսչական գործողությունների ծրագիրը հաստատվել է և ներառում է զեկույցով ներկայացված առաջարկների առնվազն 70%-ը:<br><br>3. Միջգերատեսչական գործողությունների ծրագրի նախագծի վերաբերյալ անցկացվել է առնվազն 1 հանրային քննարկում:<br><br>4. Կատարվել է գործողությունների ծրագրով նախատեսված, 2026 թվականին կատարման ենթակա գործողությունների առնվազն 80%-ը: | |
| | 4.2. Կանանց ներգրավման խթանում | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Հայտարարվել է 1 ընդունելություն՝ կանանց ներգրավումը խթանելու նպատակով: | Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Իրականացվել է համակարգում ծառայող կանանց տեսանելիությունը բարձրացնող և կին ծառայողների համար առկա հնարավորություններ | Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Իրականացվել է համակարգում ծառայող կանանց տեսանելիությունը բարձրացնող և կին ծառայողների համար առկա հնարավորություններ | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն,<br><br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, | 1. Կանանց ներգրավումը խթանելու նպատակով հայտարարվել է առնվազն 3 ընդունելություն:<br><br>Ելակետային՝ կանանց ներգրավումը խթանելու նպատակով կազմակերպվել է 1 նպատակային ընդունելություն: | Օրենքով չարգելված միջոցներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | երի մասին առնվազն 3 իրազեկման արշավ:<br><br>2. Հայտարարվել է 1 ընդունելություն՝ կանանց ներգրավումը խթանելու նպատակով: | երի մասին առնվազն 3 իրազեկման արշավ:<br><br>2. Հայտարարվել է 1 ընդունելություն՝ կանանց ներգրավումը խթանելու նպատակով: | ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ (համաձայնու-թյամբ)<br><br>Տեղական ինքնակառավարմա ն մարմիններ (համաձայնու-թյամբ) | 2. Իրականացվել է առնվազն 6 իրազեկման արշավ, որոնք ներառում են տեղեկատվական թերթիկների, պաստառների պատրաստում և տպագրում, առնվազն 1 տեսանյութի մշակում և տեսալսողական մեդիայով ու սոցիալական ցանցերով տարածում, ինչպես նաև կանանց մասնակցությամբ առնվազն 1 ֆոկուս-խմբային քննարկում և 1 մարզային իրազեկման միջոցառում:<br><br>Ելակետային՝ 1 լայնամասշտաբ իրազեկման արշավ:<br><br>3. Գործողությունների համալիր միջոցառումների իրականացման և իրազեկման թիրախային արշավների արդյունքներով գրանցվել է Ոստիկանությունում կին ծառայողների թվի աճ՝ առնվազն 8%-ով՝ 2025թ., և առնվազն 30%-ով՝ 2027թ.:<br><br>Ելակետային՝ 7%: | |
| 5. | Ոստիկանության համակարգում կոռուպցիայի կանխարգելում և բարեվարքության ամրապնդում | | | | | | |
| | 5.1. ՆԳՆ հակակոռուպցիոն ծրագրի հաստատում | | Առաջին կիսամյակ՝<br><br>Իրականացվել է ՆԳՆ համակարգում | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Մշակվել և ընդունվել է 2027 թվականի | ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնու-թյամբ) | 1. Ընդունվել են 2026 և 2027 թվականների հակակոռուպցիոն տարեկան աշխատանքային ծրագրերը և հրապարակվել: Ծրագրերը նախատեսում են կանոնավոր ստուգումներ և | Օրենքով չարգելված միջոցներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | կոռուպցիոն ռիսկի հակվածության գոտիների գնահատում:<br><br>Երկրորդ կիսամյակ՝<br><br>Մշակվել և ընդունվել է 2026 թվականի հակակոռուպցիոն տարեկան աշխատանքային ծրագիրը: | հակակոռուպցիոն տարեկան աշխատանքային ծրագիրը: | ՀՀ արդարադատու-թյան նախարարություն | վերլուծություններ: Տարեկան ծրագրերում ներառվել են ՆԳՆ հակակոռուպցիոն ռիսկի հակվածության գոտիների գնահատման արդյունքները<br><br>Ելակետային՝ 0:<br><br>2. Յուրաքանչյուր հակակոռուպցիոն տարեկան աշխատանքային ծրագրի շուրջ կազմակերպվել է առնվազն 2 հանրային քննարկում:<br><br>Ելակետային՝ 0: | |
| | 5.2. Ոստիկանության ծառայողների բարեվարքության ռիսկերի գնահատման գործիքակազմի ներդնում | | Առաջին կիսամյակ՝<br><br>1. Մշակվել է ծառայողների բարեվարքության ռիսկերի գնահատման գործիքակազմը:<br><br>Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Բարեվար-քության ռիսկերի գնահատման գործիքակազմը պիլոտավորվել է:<br><br>2. Գործիքակազմի կիրառման թեմայով | Առաջին կիսամյակ՝<br><br>Բարեվարքության ռիսկերի գնահատման գործիքակազմը գործարկվել է:<br><br>Երկրորդ կիսամյակ՝<br><br>Գործիքակազմի կիրառման թեմայով վերա-պատրաստվել է գործիքակազմը կիրառող անձնակազմի 70%-ը: | ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնու-թյամբ) | 1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մեթոդական աջակցությամբ համակարգի ծառայողների բարեվարքության ռիսկերի գնահատման գործիքակազմը ներդրվել է. դրա հիման վրա իրականացվում են բարեվարքության պարբերական ստուգումներ:<br><br>Ելակետային՝ 0:<br><br>2. Գործիքակազմի կիրառման թեմայով վերապատրաստվել է գործիքակազմը կիրառող անձնակազմի 100%-ը:<br><br>3. Վերապատրաստումների ավարտին անցկացված գիտելիքների գնահատման արդյունքում վերապատրաստվածները միջինում | Օրենքով չարգելված միջոցներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | վերապատրաստվել է գործիքակազմը կիրառող անձնակազմի 30%-ը: | | | դրսևորել են առնվազն 80% իմացություն:<br><br>Ելակետային՝ 0: | |
| | 5.3. Ոստիկանության ծառայողների վարքագծի կանոնների հաստատում, դրանց կիրառման գործիքակազմի հզորացում | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Մշակվել է Ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչության 2025 թվականի տարեկան միջոցառումների ծրագիրը: | Առաջին կիսամյակ՝<br><br>1. Ոստիկանության նոր կարգապահական կանոնագիրքը սահմանող օրենքի նախագիծը մշակվել է և ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:<br><br>2. Կազմվել է Ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչության 2024 թվականի տարեկան կատարողականը:<br><br>Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Ոստիկանության կարգապահական նոր կանոնագիրքը սահմանող օրենքի նախագիծն արժանացել է | Առաջին կիսամյակ՝<br><br>1. Կազմվել է ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչության 2025 թվականի տարեկան կատարողականը:<br><br>2. Կարիքների գնահատման հիման վրա՝ իրականացվել է բարեվարքության նկատմամբ վերահսկողություն իրականացնող անձնակազմի վերապատրաստում:<br><br>3. Մշակվել և ընդունվել են Ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչության | ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) | 1. Մշակվել են Մարդկային ռեսուրսների կառավարման վարչության անձնակազմի համար ստանդարտ գործառնական ընթացակարգերը:<br><br>Ելակետային՝ 0:<br><br>2. Վերապատրաստվել է Մարդկային ռեսուրսների կառավարման վարչության անձնակազմի 100%-ը:<br><br>3. Վերապատրաստման ավարտին իրականացված գիտելիքների ստուգման արդյունքում վերապատրաստվածները միջինում դրսևորել են 80% իմացություն:<br><br>Ելակետային՝ 0:<br><br>4. Ոստիկանության ծառայողների վարքագծի կանոնները հաստատող Ներքին գործերի նախարարի հրամանն ընդունվել է և ներառում է էթիկայի կանոնները:<br><br>5. Վարքագծի կանոնները հաստատող հրամանի նախագծի վերաբերյալ անցկացվել է առնվազն 1 հանրային քննարկում: | Օրենքով չարգելված միջոցներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Կառավարության հավանությանը:<br><br>2. Մշակվել է Ներքին անվտանգության և հակակո-ռուպցիոն վարչության 2026 թվականի տարեկան միջոցառումների ծրագիրը:<br><br>3. Իրականացվել է բարեվարքության նկատմամբ վերահսկողություն իրականացնող անձնակազմի գիտելիքների և կարողությունների գնահատում:<br><br>5. Մշակվել և ընդունվել են ոստիկանության ծառայողների վարքագծի կանոնները:<br><br>6. Հաստատվել և ներդրվել է Ներքին անվտան-գության և հակակոռուպցիոն | ստանդարտ գործառնական ընթացակարգերը:<br><br>4. Մշակվել և ընդունվել են մարդկային ռեսուրսների կառավարման վարչության ստանդարտ գործառնական ընթացակարգերը:<br><br>Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Ստանդարտ գործառնական ընթացակարգերի վերաբերյալ վերա-պատրաստվել է մարդկային ռեսուրսների կառավարման վարչության անձնակազմի 100%-ը:<br><br>2. Մշակվել է Ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչության 2027 թվականի տարեկան | | 6. Ոստիկանության նոր կարգապահական կանոնագիրքը սահմանող օրենքի նախագծին հավանություն տալու վերաբերյալ Կառավարության որոշումն ընդունվել է:<br><br>Ելակետային՝ գործում է «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքը, որի կարգավորումները վերանայման և էական լավարկման կարիք ունեն:<br><br>7. Ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչության կողմից ոստիկանության ծառայողների առաքինության ստուգման գործիքակազմը հաստատող իրավական ակտն ընդունվել է:<br><br>Ելակետային՝ 0:<br><br>8. Ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչության աշխատակիցների համար ներքին փաստաթղթերը, մեթոդական ուղեցույցները, ձեռնարկները մշակվել են և տպագրվել են, իսկ ստանդարտ գործառնական ընթացակարգերը մշակվել և ընդունվել են:<br><br>Ելակետային՝ 0:<br><br>9. Ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունը | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | վարչության կողմից ոստիկանության ծառայողների առաքինության ստուգման գործիքակազմը: | միջոցառումների ծրագիրը:<br><br>3. Մշակվել են Ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչության աշխատակիցների համար նախատեսված ներքին փաստաթղթերը, մեթոդական ուղեցույցները, ձեռնարկները:<br><br>4. Վարքագծի կանոնների և նոր կարգապահական կանոնագրքի վերաբերյալ վերապատրաստվել է ոստիկանության ծառայողների 60%-ը: | | գործունեություն է ծավալում՝ համաձայն նախապես մշակված տարեկան միջոցառումների ծրագրի: Մշակվել է 3 միջոցառումների ծրագիր:<br><br>Ելակետային՝ 0:<br><br>10. Ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչության տարեկան կատարողականը և թեմատիկ զեկույցները հրապարակվում են:<br><br>Ելակետային՝ 2023 թ. կատարողականի հրապարակում:<br><br>11. Անցկացվել է բարեվարքության նկատմամբ վերահսկողություն իրականացնող անձնակազմի 100%-ի կարողությունների զարգացման վերապատրաստում: Վերապատրաստման նյութերը ներառում են գիտելիքների, կարողությունների գնահատմամբ արձանագրված բացերը:<br><br>Ելակետային՝ 0:<br><br>12. Բարեվարքության կանոնների և նոր կարգապահական կանոնագրքի կարգավորումների վերաբերյալ վերապատրաստվել է ոստիկանության ծառայողների 60%-ը, ընդ որում՝ ղեկավար կազմի 100%-ը: | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 13. Վերապատրաստումների ավարտին անցկացված գիտելիքների գնահատման արդյունքներով վերապատրաստվածները միջինում դրսևորել են առնվազն 75% իմացություն:<br><br>Ելակետային՝ 0: | |
| | 5.4. Ոստիկանության ծառայությունից ազատված անձանց համար հետաշխատանքային սահմանափակումների նախատեսում | | Առաջին կիսամյակ՝<br><br>Իրականացվել է ոստիկանության ծառայությունից ազատ արձակված անձանց մասով հետաշխատան-քային ժամանակահատ-վածում թափանցիկության ապահովման և շահերի բախման ռիսկերի մեղմման օրենսդրական մեխանիզմների վերաբերյալ ուսումնասիրություն, որի արդյունքներով կազմվել է զեկույց:<br><br>Երկրորդ կիսամյակ՝ | Առաջին կիսամյակ՝<br><br>Օրենսդրական փոփոխությունների նախագիծն արժանացել է Կառավարության հավանությանը: | ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնու-թյամբ) | 1. Ոստիկանության ծառայությունից ազատ արձակված անձանց մասով հետաշխատանքային ժամա-նակահատվածում թափանցի-կության ապահովման և շահերի բախման ռիսկերի մեղմման մեխանիզմների ուսումնասի-րությունը կատարվել է միջազգային ստանդարտների (այդ թվում՝ GRECO-ի) և առնվազն 5 Եվրոպայի խորհրդի անդամ պետության լավագույն փորձի վերլուծության հիման վրա, որոնք ներառվել են զեկույցում: Զեկույցով ներկայացվել են ՀՀ օրենսդրության բարելավման առաջարկներ:<br><br>2. Զեկույցի հիման վրա մշակված օրենսդրական փոփոխությունների նախագծին հավանություն տալու վերաբերյալ Կառավարության որոշումն ընդունվել է:<br><br>Ելակետային՝ 0: | Օրենքով չարգելված միջոցներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Զեկույցի հիման վրա մշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել օրենսդրական փոփոխություն-ների նախագիծ: | | | | |
| **Ուղղություն 3՝ Կրթական միջավայրի բարելավում, ոստիկանության կադրային պատրաստում, մասնագիտական զարգացում**<br>**Խնդիր՝ Ոստիկանական կրթական համակարգի բարելավման անհրաժեշտությունը**<br>**Թիրախ՝ Արդի մարտահրավերներին դիմակայող, պրոֆեսիոնալ և հարգանքի արժանի ոստիկանական համակարգ** | | | | | | | |
| 1. | Ներքին գործերի նախարարության մեկ միասնական կրթահամալիրի ձևավորում | | Առաջին կիսամյակ՝<br><br>1. Կրթահամալիրի նոր կառուցվածքը հաստատող ենթաօրենսդրա-կան ակտն ընդունվել է:<br><br>2. Իրականացվել է անձնակազմի համալրում:<br><br>3. Իրականացվել է Կրթահամալիրի անձնակազմի վարձատրության և սոցիալական երաշխիքների համադրված | Առաջին կիսամյակ՝<br><br>Իրականացվել է անձնակազմի համալրում: | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն,<br><br>ՀՀ ֆինանսների նախարարություն | 1. Ապահովվել է Կրթահամալիրի քաղաքացիական ղեկավարումը և փոփոխվել է կառույցի ղեկավար և վարչական անձնակազմի ընտրության կարգը՝ սեռերի համակազմը պահելու երաշխիքների ստեղծմամբ:<br><br>2. Հաստատվել է Կրթահամալիրի նոր կառուցվածքը:<br><br>3. Մեկ միասնական կրթահամալիրը գործում է: Անձնակազմի առնվազն 70%-ը համալրված է:<br><br>4. Կրթահամալիրի անձնակազմի վարձատրության և սոցիալական երաշխիքների համադրված իրավիճակային վերլուծությունը ներկայացվել է Վարչապետի | Լրացուցիչ ֆինանսա-վորում չի պահանջ-վում |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | իրավիճակային վերլուծություն:<br><br>Երկրորդ կիսամյակ՝<br><br>Վերլուծության արդյունքներով Կրթահամալիրի տարեկան բյուջետային հայտերի շրջանակներում ներկայացվել են առաջարկություն-ներ: | | | աշխատակազմ և ներառում է վարձատրության և սոցիալական երաշխիքների լավարկմանն ուղղված առաջարկներ ու դրանց հիմնավորումներ:<br><br>5. Կրթահամալիրի 2026 թվականի բյուջետային հայտում ներառվել են վերլուծության արդյունքներով ներկայացված առաջարկու-թյունները: | |
| 2. | Որակյալ կրթության կազմակերպման համար բարենպաստ պայմանների ստեղծում | | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Գնահատվել է կրթական միջավայրի բարելավման համար անհրա-ժեշտ ենթակա-ռուցվածքը, նյութատեխնիկա-կան անհրաժեշտ հագեցվածու-թյունը, որի արդյունքներով կազմվել է զեկույց: | Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Իրականացվել են Կրթահա-մալիրի կրթական և մյուս տարածք-ների ձևավորման աշխատանքներ:<br><br>2. Մշակվել է կրթահամալիրն Ակադեմիական քաղաքում տեղակայման պլանը: | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն,<br><br>ՀՀ քաղաքաշինության կոմիտե | 1. Կրթական միջավայրի բարելավման համար անհրաժեշտ ենթակառուցվածքը, նյութատեխ-նիկական անհրաժեշտ հագեց-վածության գնահատման հիման վրա մշակված զեկույցը ներառում է առնվազն 2 պետության լավագույն փորձի վերլուծությունը և բարելավմանն ուղղված առաջարկություններ:<br><br>Ելակետային՝ 0:<br><br>2. Կրթահամալիրի միջավայրը համապատասխանեցվել է ոստիկանության նոր հենասյունային ուղղությունների պահանջներին՝ համալիրի կրթական և մյուս տարածքների ձևավորման եղանակով: | Տարեկան բյուջեով նախատես-ված միջոցներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 3. Մշակված է Ակադեմիական քաղաքում կրթահամալիրի տեղակայման պլանը: | |
| 3. | Ոստիկանության համակարգ մուտք գործելու և շարունակական կրթության ապահովման համար ինստիտուցիոնալ նախադրյալների ձևավորում | | Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Մշակվել և ներդրվել է Ոստիկանության համակարգ մուտք գործելու համար նախատեսված բազային կուրս:<br><br>2. Մշակվել և հաստատվել են ոստիկանական մասնագիտական նոր կրթական ծրագրերի և պետական կրթական չափորոշիչների 100%-ը: | | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | 1. Ներդրվել է Ոստիկանության համակարգ մուտք գործելու համար նախատեսված բազային կուրս, որը մշակվել է առնվազն 2 պետության վերաբերելի և հաջողված փորձի հաշվառմամբ:<br><br>Ելակետային՝ 0:<br><br>2. Ոստիկանական բոլոր կրթական մակարդակներին համապա-տասխան մասնագիտական կրթական ծրագրերը և պետական կրթական չափորոշիչները հաստատող ենթաօրենսդրական ակտերն ընդունվել են: | Լրացուցիչ ֆինանսա-վորում չի պահանջ-վում |
| 4. | Կադրերի պատրաստման և շարունակական կրթության մոդուլները ժամանակակից մեթոդաբանությամբ դասավանդող դասախոսական կազմի համալրում | | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Հաստատվել է բաց մրցույթով դասախոսական կազմի համա-լրման ընթացա-կարգը կրթական բոլոր ծրագրերի համար: | | - | 1. ՆԳՆ նոր ձևավորված կրթահա-մալիրում կրթական բոլոր ծրագրերի համար բաց մրցույթով դասախոսա-կան կազմի համալրման կարգը հաստատող ենթաօրենսդրական ակտն ընդունվել է: Սահմանվել է բաց մրցույթով համալրվող դասախոսական կազմում կանանց առնվազն 30% ներգրավվածության պահանջ: | Լրացուցիչ ֆինանսա-վորում չի պահանջ-վում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Ելակետային՝ 0:<br><br>2. Դասախոսական անձնակազմի 50%-ը աշխատում է պայմանագրային հիմունքներով: | |
| 5. | Ոստիկանության ղեկավար կազմի (այդ թվում՝ Ոստիկանապետի և Ոստիկանապետի տեղակալների) և ծառայողների վերապատրաստումների իրականացում | Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Ոստիկանության բոլոր ծառայողների համար տարեկան պարտադիր վերապատրաստման պահանջ սահմանող՝ «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխությունների նախագիծը մշակվել է և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ:<br><br>2. «Ոստիկանու-թյունում ծառայության մասին» օրենքում փոփոխությունների նախագիծը հավանության է արժանացել Կառավարության կողմից: | Առաջին կիսամյակ՝<br><br>Մշակվել և հաստատվել է Ոստիկանության ծառայողների տարեկան վերապատրաստումների պլանի մշակման մեթոդաբանությունը:<br><br>Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Հաստատվել է Առաջնորդության և կառավարման վերապատրաստման ծրագիրը:<br><br>2. Առաջնոր-դության և կառա-վարման թեմա-ներով վերապատ-րաստվել է ղեկավար կազմի առնվազն 30%-ը: | Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Առաջնորդու-թյան և կառավար-ման թեմաներով վերապատրաստվել է ղեկավար կազմի ևս 70%-ը:<br><br>2. Իրականացվել են ոստիկա-նության ստորա-բաժանումների ծառայողների վերապատրաս-տումներ՝ ըստ վերապատրաս-տումների տարեկան պլանի: | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | 1. Առաջնորդության և կառավարման վերապատրաստման ծրագիրը հաստատվել է:<br><br>2. Վերապատրաստվել է ամբողջ ղեկավար կազմը:<br><br>Ելակետային՝ 0:<br><br>3. Ոստիկանության բոլոր ծառայողների համար տարեկան պարտադիր վերապատրաստման պահանջ սահմանող՝ «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխու-թյունների նախագծին հավանու-թյուն տալու վերաբերյալ Կառավարության որոշումն ընդունվել է:<br><br>4. Ոստիկանության ծառայողների տարեկան վերապատրաստումների պլանի մշակման մեթոդաբա-նությունը հաստատելու մասին Ներքին գործերի նախարարի հրամանն ընդունվել է:<br><br>Ելակետային՝ նախատեսված է հինգ (պարեկների և քրեական ոստիկանների համար՝ երեք) | Լրացուցիչ ֆինանսա-վորում չի պահանջ-վում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | տարին մեկ անգամ պարտադիր վերապատրաստման պահանջ:<br><br>5. Ոստիկանության ստորաբաժանումների ծառայողները վերապատրաստվում են տարեկան պլանով՝ ըստ նախատեսված ժամանակացույցի: | |
| **Ուղղություն 4՝ Պարեկային ծառայության զարգացում՝ որպես արտաքին ծառայության նոր և ժամանակակից մոդել**<br>**Խնդիր՝ Արտաքին ծառայության ձեռքբերումների ամրապնդում**<br>**Թիրախ՝ Հարգանքի արժանի արտաքին ծառայության կատարելագործում, ինստիտուցիոնալացում** | | | | | | | |
| 1. | Պարեկային ծառայության գործունեության համալիր գնահատում | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Իրականացվել է պարեկային ծառայության գործունեության համալիր գնահատում, որի արդյունքներով կազմված զեկույցում ներկայացվել են հիմնական խնդիրները ու դրանց լուծման եղանակները: | Առաջին կիսամյակ՝<br><br>Զեկույցի հիման վրա մշակվել և հաստատվել է Պարեկային ծառայության զարգացման 2-րդ փուլի գործողություն-ների ծրագիրը: | | - | 1. Պարեկային ծառայության ամբողջական գործարկումից հետո գործունեության համալիր գնահատման հիման վրա մշակվել է գնահատման զեկույց:<br><br>2. Պարեկային ծառայության զարգացման 2-րդ փուլի համար անհրաժեշտ գործողությունների ծրագիրը հաստատվել է: Գործողությունների ծրագիրը ներառում է զեկույցով ներկայացված առաջարկվող լուծումների առնվազն 50%-ը:<br><br>3. Գործողությունների ծրագրի նախագծի վերաբերյալ անցկացվել է առնվազն 1 հանրային քննարկում:<br><br>Ելակետային՝ 0: | Լրացու-ցիչ ֆինան-սավորում չի պահանջ-վում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2. | Պարեկային ծառայության անձնակազմի շարունակական կրթության (in service) ապահովում | | Առաջին կիսամյակ՝<br><br>Հաստատվել է պարեկային ծառայության անձնակազմի տարեկան վերապատրաստ ման պլանը: Վերանայվել են համապատասխ ան կրթական մոդուլները:<br><br>Երկրորդ կիսամյակ՝<br><br>Համաձայն տարեկան վերապատրաստ ման պլանի՝ վերապատրաստ վել է պարեկային ծառայության ամբողջ անձնակազմը: | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Համաձայն տարեկան վերա-պատրաստման պլանի՝ վերա-պատրաստվել է պարեկային ծառայության ամբողջ անձնակազմը: | - | 1. Պարեկային ծառայության անձնակազմի տարեկան վերապատրաստման պլանը հաստատվել է: Կրթական մոդուլները վերանայվել են:<br><br>Ելակետային՝ 0:<br><br>2. Պարեկային ծառայության անձնակազմը վերապատրաստվել է՝ համաձայն պլան-ժամանակա-ցույցի: | Տարեկան բյուջեով նախա-տեսված միջոցներ |
| 3. | Ջրային պարեկային ծառայության ստանդարտ գործառնական ընթացակարգի (SOP) մշակում, անձնակազմի կարողությունների զարգացում | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Ընդլայնված վերապատրաստում է անցել Ջրային պարեկային ծառայության անձնակազմի 50%-ը: | Առաջին կիսամյակ՝<br><br>Մշակվել է Ջրային պարեկային ծառայության ստանդարտ գործառնական ընթացակարգը: | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Վերապատ-րաստվել է Ջրային պարեկային ծառայության ամբողջ անձնակազմը: | ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն | 1. Ջրային պարեկային ծառայության ստանդարտ գործառնական ընթացակարգը (SOP) հաստատելու մասին Ներքին գործերի նախարարի հրամանն ընդունվել է:<br><br>Ելակետային՝ 0, 2025թ.՝ 1: | Լրացու-ցիչ ֆինան-սավորում չի պահանջ-վում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Հաստատվել է Ջրային պարեկային ծառայության ստանդարտ գործառնական ընթացակարգը:<br><br>2. Ընդլայնված վերապատրաստում է անցել Ջրային պարեկային ծառայության ամբողջ անձնակազմը: | | | 2. Ջրային պարեկային ծառայության ամբողջ անձնակազմը յուրաքանչյուր տարի շարունակաբար վերապատրաստվել է: Վերապատրաստման ավարտին անցկացված գիտելիքների ստուգման արդյունքում վերապատրաստվածները միջինում դրսևորել են 2025 թվականին՝ առնվազն 75%, 2026 թվականին՝ առնվազն 80% իմացություն:<br><br>Ելակետային՝ Ջրային պարեկային ծառայության ամբողջ անձնակազմը բազային վերապատրաստում է անցել: | |
| 4. | Պարեկային ծառայության մոնիթորինգի ստորաբաժանման ստանդարտ գործառնական ընթացակարգի (SOP) մշակում, անձնակազմի կարողությունների հզորացում | | Առաջին և կիսամյակ՝<br><br>Հաստատվել է մոնիթորինգի ստորաբաժանման ստանդարտ գործառնական ընթացակարգը:<br><br>Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Յուրաքանչյուր մարզում նշանակվել է մոնիթորինգի | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Ստանդարտ գործառնական ընթացակարգի հիման վրա վերապատրաստվել է մոնիթորինգի ստորաբաժանման ծառայողների ևս 50%-ը: | - | 1. Մոնիթորինգի ստորաբաժանման ստանդարտ գործառնական ընթացակարգը հաստատվել է և ուրվագծում է ստորաբաժանման պարտականությունների, իրավունքների, պատասխանատվության շրջանակը, հստակ սահմանում առաքելությունները, նախատեսում բացահայտած խնդիրներն օպերատիվ հրամանատարական շղթային զեկուցելու ուղիները:<br><br>Ելակետային՝ 0:<br><br>2. Յուրաքանչյուր մարզում նշանակված է մոնիթորինգի անձնակազմի ներկայացուցիչ: | Օրենքով չարգելված միջոցներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | անձնակազմի ներկայացուցիչ:<br><br>2. Ստանդարտ գործառնական ընթացակարգի հիման վերա-պատրաստվել է մոնիթորինգի ստորաբաժան-ման աշխատող-ների առնվազն 50%-ը: | | | Ելակետային՝ 0:<br><br>3. Մոնիթորինգի ստորաբաժանման բոլոր ծառայողները վերապատ-րաստվել են: Վերապատրաստման ավարտին կատարված գնահատման արդյունքում վերապատրաստվածները դրսևորել են առնվազն 85% իմացություն: | |
| 5. | Պարեկային ծառայություն մուտքի հնգամյա կուրսի կատարելագործում, այդ թվում՝ բովանդակության և տևողության համադրված վերանայմամբ | | Առաջին կիսամյակ՝<br><br>Պարեկային ծառայության գործունեության համալիր գնահատման զեկույցի հիման վրա՝ մշակվել է պարեկային ծառայություն մուտքի կուրսի կատարելագործ մանն ուղղված զեկույց:<br><br>Երկրորդ կիսամյակ՝<br><br>Զեկույցի հիման վրա լրամշակվել և հաստատվել է բազային կուրսի | | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | 1. Զեկույցը մշակվել է և հրապարակվել Ներքին գործերի նախարարության պաշտոնական կայքում: Զեկույցում կատարված վերլուծությունը հիմնվել է պարեկային ծառայողների, դասախոսների, ոլորտային հասարակական կազմակեր-պությունների հետ հարցազրույց-ների, ինչպես նաև կուրսի նյութերի և առնվազն 3 պետության լավագույն փորձի ուսումնա-սիրության հիման վրա, որոնք ներկայացվել են զեկույցում:<br><br>2. Հաստատվել է Պարեկային ծառայության մուտքի բազային կուրսի նոր կրթական չափորոշիչը:<br><br>Ելակետային՝ բազային կուրսն անցել է 1 վերանայում: | Լրացու-ցիչ ֆինան-սավորում չի պահանջ-վում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | կրթական չափորոշիչը: | | | | |
| 6. | Պարեկային ծառայության ընդունելության կազմակերպում | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Հայտարարվել է 1 ընդունելություն՝ կանանց ներգրավումը խթանելու նպատակով: | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Հայտարարվել են ընդունելու-թյուններ՝ ըստ կադրային կարիքների: | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Հայտարարվել են ընդունելություն-ներ՝ ըստ կադրային կարիքների: | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Տեղական ինքնակառավար-ման մարմիններ (համաձայնությամբ) | Ըստ կադրային կարիքների՝ հայտարարվել են ընդունելություններ, սակայն ոչ պակաս, քան 3 ընդունելություն, որոնցից առնվազն 1-ը՝ կանանց ներգրավումը խթանելու նպատակով:<br><br>Ելակետային՝ կազմակերպվել է 5 ընդունելություն: | Տարեկան բյուջեով նախա-տեսված միջոցներ |
| 7. | Պարեկային ծառայություն նոր ընդունված ծառայողի մենթորության ծրագրի ներդնում | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Մշակվել և ընդունվել է մենթորության ծրագրի անցկացման հիմքերը սահմանող՝ ՆԳ նախարարի հրամանը: | Առաջին կիսամյակ՝<br><br>Մենթորության ծրագիրը գործարկվել է: | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Իրականացվել է ընդունելության արդյունքներով նշանակված բոլոր ծառայողների մենթորություն: | - | 1. Հաստատվել է մենթորության ծրագրի հիմքերը սահմանող՝ ՆԳ նախարարի հրամանը: Մենթորության ծրագրի իրականացումը դարձել է պարտադիր բաղադրիչ և գործարկվել է: Սահմանվել է մենթորային ծրագրի փուլային գործարկում:<br><br>2. Իրականացվել է ընդունելության արդյունքներով նշանակված ծառայողների 100 %-ի մենթորություն: | Օրենքով չարգել-ված այլ միջոցներ |

**Ուղղություն 5՝ Հանրապետական մեկ միասնական օպերատիվ կառավարման կենտրոնի (112) ստեղծում**

**Խնդիր՝ Հանրապետական մակարդակում արտակարգ տարբեր իրավիճակներում քաղաքացիների ահազանգերի արդյունավետ արձագանքման բազմապրոֆիլ համակարգի բացակայություն**

**Թիրախ՝ Քաղաքացիների ահազանգերի օպերատիվ և մատչելի սպասարկում**

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Հանրապետական մեկ միասնական օպերատիվ կառավարման կենտրոնի (112) ստեղծում | | Երկրորդ կիսամյակ՝<br><br>«Փրկարար ծառայության մասին», «Ոստի-կանության մասին», «Ոստի-կանությունում ծառայության մասին» և վերա-բերելի այլ օրենքներում փոփոխություն-ներ և լրացում-ներ կատարելու մասին օրենք-ների նախագծերի փաթեթը մշակվել է և ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: | Առաջին կիսամյակ՝<br><br>1. Օրենքների նախագծերի փաթեթը հավանության է արժանացել Կառավարության կողմից:<br><br>2. Ներքին գործերի նախա-րարության կանո-նադրությունում կառուցվածքային փոփոխություններ նախատեսող նախագիծն ընդունվել է:<br><br>3. 112 օպերատիվ կենտրոնի կանոնադրությունը հաստատվել է:<br><br>4. Մշակվել է հանրապետական մեկ միասնական կառավարման կենտրոնի ծրագրային ապահովման տեխնիկական առաջադրանքը:<br><br>5. Մշակվել են օպերատիվ | ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն<br><br>ՀՀ առողջապահության նախարարություն<br><br>ՀՀ ֆինանսների նախարարություն | 1. «Փրկարար ծառայության մասին», «Ոստիկանության մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին» և վերաբերելի այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթին հավանություն տալու վերաբերյալ Կառավարության որոշումն ընդունվել է:<br><br>2. Նախագծերի փաթեթի վերաբերյալ անցկացվել է առնվազն 1 հանրային քննարկում, որի շրջանակներում ներկայացված առաջարկությունների առնվազն 30%-ն ընդունվել է:<br><br>3. Ներքին գործերի նախարա-րության կանոնադրության փոփոխությունները հաստատող Վարչապետի որոշումն ընդունվել է: Որոշմամբ ՆԳՆ կառուցվածքում կատարվել են փոփոխություններ. ՆԳՆ կառուցվածքում նախատեսվել է օպերատիվ կառավարման գրասենյակը:<br><br>4. 112 գրասենյակի կանոնադրությունը հաստատող՝ Ներքին գործերի նախարարի հրամանն ընդունվել է:<br><br>5. Կանոնադրության նախագծի վերաբերյալ անցկացվել է առնվազն 2 հանրային քննարկում, որոնց շրջանակներում ներկայացված | Օրենքով չարգել-ված միջոցներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կենտրոնի անձնակազմի վերապատրաստ-ման նյութերը:<br><br>Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Հանրապետա-կան մեկ միասնա-կան կառավար-ման կենտրոնը գործարկվել է:<br><br>2. Հանրապե-տական մեկ միասնական օպերատիվ կառավարման կենտրոնի ամբողջ անձնակազմը վերապատրաստ-վել է: | | առաջարկությունների առնվազն 30%-ն ընդունվել է:<br><br>6. Հանրապետական մեկ միասնական կառավարման կենտրոնը գործարկվել է՝ ներառյալ տեխնիկական ու ծրագրային ապահովումը: Զուգահեռաբար դադարեցվել է առանձին հեռախոսահամարներով զանգերի սպասարկումը՝ ահազանգերի օգտագործման համար ապահովելով 112 միասնական հեռախոսահամարի գործարկումը:<br><br>Ելակետային՝ Ոստիկանություն, Փրկարար ծառայություն ահազանգերի, Շտապօգնություն կանչերի համար գործածվում են առանձին հեռախոսահամարներ (102, 103, 911):<br><br>7. Հանրապետական մեկ միասնական օպերատիվ կառավարման կենտրոնի անձնակազմի վերապատրաստման նյութերը մշակվել են միջազգային ստանդարտների և առնվազն 2 պետության լավագույն փորձի հաշվառմամբ և ներառում են զանգերին պատասխանելու, դրանք կառավարելու ստանդարտ գործառնական ընթացակարգերին վերաբերող թեմաներ:<br><br>8. Հանրապետական մեկ միասնա-կան օպերատիվ կենտրոնի ամբողջ | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | անձնակազմը վերապատրաստվել է:<br><br>Ելակետային՝ 0: | |
| **Ուղղություն 6՝ Քրեական ոստիկանության զարգացում, օպերատիվ աշխատանքի արդյունավետություն**<br>**Խնդիր՝ Հանցավորության կանխարգելման ռազմավարական մոտեցման բացակայություն, օպերատիվ-հետախուզական գործունեության պոտենցիալի ոչ բավարար օգտագործում**<br>**Թիրախ՝ Հանցագործությունների կանխման ու քրեական գործերի քննության արդյունավետության բարձրացում քրեական ոստիկանության առավել արդյունավետ ներգրավվածության միջոցով** | | | | | | | |
| 1. | Երևանում և մարզերում նոր կառուցվածքով և ֆունկցիոնալ հստակեցմամբ գործարկված Քրեական ոստիկանության ինստիտուցիոնալ կայացում | Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Բաց մրցույթով քրեական ոստիկանությունում ծառայության անցնելու համար դիմած քաղաքացիական անձինք և ոստիկանները պատրաստվել են կրթական նոր մոդուլներով և նշանակվել համապատասխան պաշտոններում: Պատրաստության խողովակով անցել է շուրջ 600 անձ:<br><br>2. Քրեական ոստիկանության նոր կառուցվածքը հաստատվել է: | Երկրորդ կիսամյակ<br><br>1. Իրականացվել է նոր կառուցվածքով գործող Քրեական ոստիկանության գործունեության մշտադիտարկում՝ ծառայության ինստիտուցիոնալ զարգացումն ապահովելու նպատակով:<br><br>2. Քրեական ոստիկանության պատրաստված ծառայողների 100%-ը վերապատրաստվել է՝ ապահովելով | | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | 1. Քրեական ոստիկանության նոր կառուցվածքը և տարածքային ստորաբաժանումների տիպային մոդելները հաստատվել են:<br><br>2. Քրեական ոստիկանությունում համապատասխան պաշտոններին նշանակվել են բացառապես մրցույթի արդյունքներով ընտրված և կրթությունը հաջողությամբ ավարտած դիմորդները:<br><br>Ելակետային՝ 0:<br><br>3. Իրականացվել է Քրեական ոստիկանության գործունեության մշտադիտարկում, որի արդյունքներով մշակվել է մշտադիտարկման զեկույց՝ ներառելով արձանագրված խնդիրները և դրանց լուծման առաջարկները:<br><br>Ելակետային՝ 0: | Տարեկան բյուջեով նախատեսված միջոցներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | շարունակական կրթությունը: | | | 4. Քրեական ոստիկանության բոլոր ծառայողները անցել են նախատեսված պարբերական վերապատրաստումը: Վերապատրաստման ավարտին անցկացված գնահատման արդյունքներով վերապատրաստ-վածները միջինում դրսևորել են առնվազն 75% իմացություն: | |
| 2. | Հանցավորության կանխարգելման գործողությունների համալիր ծրագրի մշակում | | Առաջին կիսամյակ՝<br><br>Գործողություն-ների ծրագիրը մշակվել է:<br><br>Երկրորդ կիսամյակ՝<br><br>Գործողություն-ների ծրագիրն ընդունվել է: | | ՀՀ արդարադատու-թյան նախարարություն,<br><br>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն,<br><br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,<br><br>ՀՀ առողջապահության նախարարություն,<br><br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն,<br><br>ՀՀ պետական եկամուտների կոմիտե, | 1. Գործողությունների ծրագիրն ընդունվել է և ներառում է բոլոր դերակատարների ներգրավմամբ հանցավորության կանխարգելման համալիր գործողություններ:<br><br>2. Գործողությունների ծրագրի վերաբերյալ անցկացվել է առնվազն 3 հանրային քննարկում, ընդունվել է առաջարկությունների առնվազն 30%-ը:<br><br>Ելակետային՝ 0: | Օրենքով չարգել-ված միջոցներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնու-թյամբ),<br><br>ՀՀ քննչական կոմիտե (համաձայնու-թյամբ),<br><br>ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնու-թյամբ),<br><br>ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ (համաձայնությամբ) | | |
| 3. | Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունավետության բարձրացում, օպերատիվ-հետախու-զական գործունեության ընթացա-կարգի համապատասխանեցում միջազգային չափանիշներին՝ մարդու իրավունքների պաշտպանության համատեքստում | | Առաջին կիսամյակ՝<br><br>«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» նոր օրենքի և դրանից բխող հարակից օրենքների նախագծերի փաթեթը մշակվել է և ներկայացվել է | Առաջին կիսամյակ՝<br><br>Մշակվել են օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող բոլոր մարմինների անձնակազմերի վերապատրաստ-ման նյութերը:<br><br>Երկրորդ կիսամյակ՝ | ՀՀ արդարադատու-թյան նախարարություն,<br><br>ՀՀ պաշտպանության նախարարություն,<br><br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն,<br><br>ՀՀ արտաքին հետախուզության ծառայություն, | 1. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» նոր օրենքի և դրանից բխող հարակից օրենքների նախագծերի փաթեթին հավանություն տալու վերաբերյալ Կառավարության որոշումն ընդունվել է:<br><br>2. Օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ անցկացվել է առնվազն 3 հանրային քննարկում, ընդունվել է առաջարկությունների առնվազն 30%-ը:<br><br>Ելակետային՝ գործում է «Օպերատիվ-հետախուզական | Լրացու-ցիչ ֆինան-սավորում չի պահանջ-վում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Վարչապետի աշխատակազմ:<br><br>Երկրորդ կիսամյակ՝<br><br>Օրենքների նախագծերի փաթեթը հավանության է արժանացել Կառավարության կողմից: | Վերապատրաստ-վել է յուրաքանչյուր մարմնի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձնակազմի առնվազն 70%-ը: | ՀՀ պետական եկամուտների կոմիտե,<br><br>ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնու-թյամբ),<br><br>ՀՀ քննչական կոմիտե (համաձայնու-թյամբ),<br><br>ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ) | գործունեության մասին» օրենքը, որը կարիք ունի համակարգային փոփոխությունների:<br><br>3. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող յուրաքանչյուր մարմնի անձնա-կազմի առնվազն 70%-ը վերապատրաստվել է: Վերապատրաստումների ավարտին իրականացված գիտելիքների գնահատման արդյունքում վերապատրաստվածները միջինում դրսևորել են նոր օրենսդրության առնվազն 80% իմացություն:<br><br>Ելակետային՝ 0: | |
| 4. | Հանցագործությունների միասնական, հանրային հասանելի տվյալների բազայի ստեղծում, որը կպարունակի դասակարգված տվյալներ, այդ թվում՝ հանցանքի մասին հաղորդումների և քրեական վարույթ չնախաձեռնելու դեպքերի վերաբերյալ | | Առաջին կիսամյակ՝<br><br>Կատարվել է ՆԳՆ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի համապարփակ գնահատում, քրեական արդա-րադատության ոլորտում ներդրված և ներդրվող էլեկտրոնային համակարգերի՝ վիճակագրական տվյալների | Առաջին կիսամյակ՝<br><br>Տվյալների բազան գործարկվել է: | ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն,<br><br>ՀՀ արդարադատու-թյան նախարարություն,<br><br>ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնու-թյամբ),<br><br>ՀՀ քննչական կոմիտե (համաձայնու-թյամբ), | 1. Ուսումնասիրությունը կատարվել և հրապարակվել է ՆԳՆ պաշտո-նական կայքում և ներառում է ՆԳՆ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի համապարփակ գնահատում, քրեական արդա-րադատության ոլորտում ներդրված և ներդրվող էլեկտրոնային համա-կարգերի՝ վիճակագրական տվյալների վերհանման հնարա-վորությունների գնահատում, ինչպես նաև հուսալի վիճա-կագրության վարման համար Եվրոպայի խորհրդի առնվազն 3 պետության լավագույն փորձի ուսումնասիրություն: | Օրենքով չարգել-ված միջոցներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | վերհանման հնարավորու-թյունների գնահատում և հուսալի փիճա-կագրության վարման համար միջազգային փորձի ուսումնա-սիրություն: | | ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ) | 2. Հանցագործությունների միասնական, հանրային հասանելի տվյալների բազան գործարկվել է:<br><br>Ելակետային՝ 0: | |
| 5. | Քրեական ոստիկանության և ոստիկանության մնացյալ 3 հենասյունային ուղղությունների միջև տվյալների ինքնաշխատ փոխանակում՝ օպերատիվ աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով | | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Գործարկվել է տվյալների ինքնաշխատ փոխանակումն ապահովող համակարգը: | | ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն | Գործարկվել է տվյալների ինքնաշխատ փոխանակումն ապահովող համակարգը:<br><br>Ելակետային՝ 0: | Լրացու-ցիչ ֆինան-սավորում չի պահանջ-վում |
| 6. | Անձին արգելանքի վերցնելու համապարփակ, միասնական էլեկտրոնային գրանցամատյանի ներդնում, որում արտացոլվում են ոստիկանության կողմից արգելանքի վերցնելու գործընթացի բոլոր փուլերն ու ասպեկտները՝ փաստացի արգելանքի վերցնելու պահից մինչև արգելանքի վերցված անձին մեկ այլ հաստատություն տեղափոխելը կամ ազատ արձակելը | | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Կատարվել է ուսումնասիրու-թյուն և արդյունքները ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ: | Առաջին կիսամյակ՝<br><br>Անձին արգելանքի վերցնելու համապարփակ, միասնական էլեկտրոնային գրանցամատյանը ներդրվել է: | ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն,<br><br>ՀՀ արդարադատու-թյան նախարարություն,<br><br>ՀՀ ֆինանսների նախարարություն,<br><br>ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնու-թյամբ), | 1. Կատարվել է անձին արգելանքի վերցնելու համապարփակ, միասնական էլեկտրոնային գրանցամատյանի ներդրմանն ուղղված ուսումնասիրություն և արդյունքները ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ: Ուսումնասիրությունը ներառում է միջազգային չափանիշների (ներառյալ՝ ՄԻԵԴ նախադեպային իրավունքի) և առնվազն 3 Եվրոպայի խորհրդի անդամ պետության լավագույն փորձի վերլուծությունը:<br><br>2. Անձին արգելանքի վերցնելու համապարփակ, միասնական | Օրենքով չարգել-ված միջոցներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ՀՀ քննչական կոմիտե (համաձայնու-թյամբ),<br><br>ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ) | էլեկտրոնային գրանցամատյանը ներդրվել է և ապահովում է փոխգործելիություն համապատասխան պետական մարմինների էլեկտրոնային շտեմարանների հետ:<br><br>Ելակետային՝ 0: | |
| **Ուղղություն 7՝ Համայնքային ոստիկանության վերաիմաստավորում**<br>**Խնդիր՝ Համայնքային ոստիկանների կողմից ինստիտուտին ոչ վերաբերելի և այլ մարմիններին հատուկ գործառույթների իրականացում**<br>**Թիրախ՝ Գործառութային իմաստով համայնքային ոստիկանության կայացում** | | | | | | | |
| 1. | Երևանում և մարզերում նոր կառուցվածքով և ֆունկցիոնալ հստակեցմամբ գործարկված Համայնքային ոստիկանության ինստիտուցիոնալ կայացում | | Երկրորդ կիսամյակ<br><br>1. Ապահովվել է ամբողջ հանրա-պետությունում նոր կառուց-վածքով Համայնքային ոստիկանության գործունեու-թյունը:<br><br>2. Փուլային սկզբունքով դադարեցվում է Համայնքային ոստիկանության ը ոչ բնորոշ գործառույթների իրականացումը | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Վերապատրաստ-վել է համայնքային ոստիկանների 100%-ը: | ՀՀ արդարադատու-թյան նախարարություն<br><br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 1. Համայնքային ոստիկանությունը նոր կառուցվածքով և ուղղաձիգ կառավարմամբ գործում է ամբողջ հանրապետությունում:<br><br>Ելակետային՝ 0:<br><br>2. Փուլային սկզբունքով Համայնքային ոստիկանությունը դադարեցնում է ոչ տիպիկ գործառույթների իրականացումը (այդ թվում՝ ուղեկցումներ, ծանուցումների փոխանցում հասցեատիրոջը, պարտապանի հետախուզում և հայտնաբերում):<br><br>3. Համայնքային ոստիկանության վերապատրաստման ծրագրերը վերանայվել են՝ եվրոպական լավագույն ստանդարտների տեսանկյունից, և հաստատվել: | Լրացու-ցիչ ֆինան-սավորում չի պահանջ-վում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | և տեղափոխվում վերաբերելի կառույցների դաշտ։<br><br>3. Համայնքային ոստիկանության վերապատ-րաստման ծրագրերը վերանայվել են։<br><br>4. Վերապատ-րաստվել է համայնքային ոստիկանների առնվազն ևս 60%-ը։ | | | 4. Համայնքային ոստիկանության բոլոր ծառայողները վերապատ-րաստվել են։ Վերապատրաստման ավարտին անցկացված գնահատման արդյունքներով վերապատրաստվածները միջինում դրսևորել են առնվազն 75% իմացություն։<br><br>Ելակետային՝ 0։ | |
| 2. | Համայնքային ոստիկանության աշխատանքի թվայնացում, թափանցիկ գործելաոճի ապահովում | Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Համայնքային ոստիկանության հիմնա-կան գործառույթների հիման վրա իրականացվել է բիզնես պրոցեսների գնահատում, որի հիման վրա մշակվել է թվային համակարգի ներդրման տեխնիկական առաջադրանքը։<br><br>2. Տեխնիկական առաջադրանքի հիման վրա հայտարարվել է մրցույթ։ | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Գործարկվել է Համայնքային ոստիկանության աշխատանքը կազմակերպող թվային համակարգը։<br><br>2. Ձեռք է բերվել առնվազն 500 միավոր տեխնիկա (կրծքին ամրացվող տեսախցիկներ, դյուրակիր | Առաջին կիսամյակ՝<br><br>Ձեռք է բերվել Համայնքային ոստիկանությանն անհրաժեշտ տեխնիկայի մնացյալ մասը։ | ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն | 1. Գործարկվել է Համայնքային ոստիկանության աշխատանքը կազմակերպող թվային համակարգը։<br><br>Ելակետային՝ 0։<br><br>2. Համայնքային ոստիկանության ամբողջ անձնակազմն ապահովվել է անհրաժեշտ տեխնիկայով (կրծքին ամրացվող տեսախցիկներ, դյուրակիր համակարգիչներ, ռացիաներ և այլն)։<br><br>Ելակետային՝ 0։ | Տարեկան բյուջեով նախա-տեսված, ինչպես նաև օրենքով չարգել-ված այլ միջոցներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | համակարգիչ-ներ, ռացիաներ): | | | | |
| **Ուղղություն 8՝ Ոստիկանության զորքերի վերափոխում, Ոստիկանության գվարդիայի ձևավորում**<br>**Խնդիր՝ Ոստիկանության զորքերի կարգավիճակի, զորքերի գործնական ներգրավվածության ու զբաղվածության անհստակություն**<br>**Թիրախ՝ Քաղաքացիական վերահսկողության տակ գտնվող և մասնագիտացված ոստիկանության գվարդիայի ապահովում** | | | | | | | |
| 1. | Ոստիկանության գվարդիայի գործարկում | | | | | | |
| | 1.1. «Ոստիկանության գվարդիայի մասին» և հարակից օրենքներում փոփոխությունների և լրացումների մասին օրենքների նախագծերի փաթեթից բխող ենթաօրենսդրական ակտերի ընդունում | | Առաջին կիսամյակ՝<br><br>Մշակվել են Օրենքների նախագծերի փաթեթից բխող ենթաօրենսդրա-կան ակտերը:<br><br>Երկրորդ կիսամյակ՝<br><br>Օրենքների նախագծերի փաթեթից բխող ենթաօրենսդրա-կան ակտերը ընդունվել են: | | ՀՀ պաշտպանության նախարարություն | 1. «Ոստիկանության գվարդիայի մասին» և հարակից օրենքներում փոփոխությունների և լրացումների մասին օրենքների նախագծերի փաթեթի ընդունումից բխող ենթաօրենսդրական ակտերը մշակվել և ընդունվել են:<br><br>Ելակետային՝ 0: | Լրացուցիչ ֆինանսա-վորում չի պահանջ-վում |
| | 1.2. Ոստիկանության գվարդիայի՝ իրեն վերապահված գործառույթների իրականացման համար ծառայողների թվաքանակի, նյութատեխնիկական անհրաժեշտ հագեցվածության աուդիտ | Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Իրականացվել է Ոստիկանության գվարդիայի՝ իրեն վերապահված | Առաջին կիսամյակ<br><br>Աուդիտի արդյունքներով առաջարկներ են ներկայացվել | Առաջին կիսամյակ<br><br>Աուդիտի արդյունքներով առաջարկներ են ներկայացվել | ՀՀ ֆինանսների նախարարություն | 1. Ոստիկանության գվարդիայի՝ իրեն վերապահված գործառույթ-ների իրականացման համար ծառայողների թվաքանակի, նյութատեխնիկական հագեցվածության աուդիտն | Լրացուցիչ ֆինանսա-վորում չի պահանջ-վում |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | գործառույթների իրականացման համար ծառայողների թվաքանակի, նյութատեխնիկական հագեցվածության աուդիտը, որի արդյունքները ներկայացվել են Վարչապետի աշխատակազմ:<br><br>2. Աուդիտի արդյունքներով մշակվել և հաստատվել է Ոստիկանության գվարդիայի թվակազմը:<br><br>3. Աուդիտի արդյունքներով առաջարկներ են ներկայացվել Ոստիկանության 2025 թվականի բյուջետային հայտով: | Ոստիկանության 2026 թվականի բյուջետային հայտով: | Ոստիկանության 2027 թվականի բյուջետային հայտով: | | իրականացվել է և դրա արդյունքները ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ:<br><br>2. Ոստիկանության բյուջետային հայտերով, ըստ կարիքների առաջնահերթությունների, ներկայացվել են Ոստիկանության գվարդիային վերաբերելի առաջարկներ, որոնք համապատասխանում են աուդիտի արդյունքներին:<br><br>3. Ոստիկանության գվարդիայի թվակազմը հաստատող որոշումն ընդունել է և համապատասխանում է աուդիտի արդյունքներին:<br><br>Ելակետային՝ 0: | |
| | 1.3. Ուժային միջոցների գործադրման համար ստանդարտ գործառնական ընթացակարգերի (SOP) մշակում | | Առաջին կիսամյակ՝<br><br>Ստանդարտ գործառնական ընթացակարգերը մշակվել և հաստատվել են: | | - | 1. Ուժային միջոցների գործադրման համար ստանդարտ գործառնական ընթացակարգերը հաստատելու մասին ՆԳ նախարարի հրամանն ընդունվել է: Ստանդարտ գործառնական ընթացակարգերը մշակվել են միջազգային չափանիշների և առնվազն 3 պետության լավագույն փորձի հաշվառմամբ: | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 2. Ստանդարտ գործառնական ընթացակարգերը հաստատելու մասին հրամանի նախագծի վերաբերյալ անցկացվել է առնվազն 1 հանրային քննարկում:<br><br>Ելակետային՝ 0: | |
| | 1.4. Ոստիկանության գվարդիայի ամբողջական վերապատրաստում՝ հասարակական կարգի պահպա-նության համար նախատեսված արդի տակտիկաների և վերլուծական կանխատեսման մասնագիտական հնարավորությամբ | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Մշակվել են վերապատրաստման կուրսը և վերապատրաստման նյութերը: | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Վերապատրաստ-վել է Ոստիկանու-թյան գվարդիայի անձնակազմի 50%-ը: | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Վերապատրաստ-վել է Ոստիկանու-թյան գվարդիայի անձնակազմի ևս 50%-ը: | - | 1. Վերապատրաստման կուրսը և նյութերը մշակվել են և համապատասխանում են միջազգային չափանիշներին: Հասարակական կարգի պահպանության համար նախատեսված արդի պրակտիկաների կիրառմամբ վերապատրաստման կուրսի նվազագույն տևողությունը մեկ ամիս է:<br><br>2. Ոստիկանության գվարդիայի ամբողջ անձնակազմը վերապատրաստվել է հասարակական կարգի պահպանության համար նախատեսված արդի տակտիկաների կիրառմամբ:<br><br>3. Ոստիկանության գվարդիայի ամբողջ անձնակազմը վերապատրաստվել է հոգեբանական հմտությունների վերաբերյալ թեմաներով, ներառյալ՝ կապված դիմակայունության և սթրեսային իրավիճակներում կողմնորոշման հետ:<br><br>Ելակետային՝ 0: | Տարեկան բյուջեով նախատես-ված միջոցներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 1.5. Ոստիկանության գվարդիայի գործարկում | | Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Ոստիկանության գվարդիայի հրամանատարը նշանակվել է:<br><br>2. Ոստիկանության գվարդիան գործունեություն է ծավալում: | | - | 1. Ոստիկանության գվարդիայի հրամանատարին նշանակելու մասին Ներքին գործերի նախարարի հրամանն ընդունվել է: Ոստիկանության գվարդիան՝ նոր անձնակազմով, ծավալում է համապատասխան գործունեություն:<br><br>Ելակետային՝ 0: | Տարեկան բյուջեով նախատեսված միջոցներ |
| | 1.6. Ոստիկանության գվարդիայի կազմում հատուկ տակտիկական (SWAT) թիմի ձևավորում | | Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Ոստիկանության գվարդիայի կառուցվածքում սահմանվել է հատուկ տակտիկական (SWAT) ստորաբաժանումը:<br><br>2. Մշակվել են տակտիկական թիմի հատուկ վերապատրաստման նյութերը: | Առաջին կիսամյակ՝<br><br>Իրականացվել է տակտիկական ամբողջ թիմի վերապատրաստում: | - | 1. Ոստիկանության գվարդիայի կազմում հատուկ տակտիկական (SWAT) թիմի ստեղծումը սահմանող Ոստիկանության պետի հրամանն ընդունվել է:<br><br>2. Ոստիկանության գվարդիայի հատուկ տակտիկական (SWAT) խմբի բոլոր ծառայողներն անցել են հատուկ վերապատրաստում:<br><br>Ելակետային՝ 0: | Օրենքով չարգելված միջոցներ |
| | 1.7. Ոստիկանության գվարդիայի կողմից պետական պահպանության ենթակա օբյեկտների արդի դասակարգում և պահնորդական գործունեության չափանիշների լավարկում | Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա օբյեկտների | Առաջին կիսամյակ՝<br><br>1. Ոստիկանության կողմից պետական պահպանության | | ՀՀ անվտանգության խորհրդի գրասենյակ, | 1. Ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա օբյեկտների նոր ցանկը հաստատելու վերաբերյալ Կառավարության որոշումն ընդունվել է: Սահմանվել են | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ցանկում փոփոխությունների նախագիծը մշակվել է և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ:<br><br>2. «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» և «Ոստիկանության մասին» օրենքներում փոփոխությունների նախագծերի փաթեթը մշակվել է և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ: | ենթակա օբյեկտների ցանկում փոփոխությունների նախագիծն ընդունվել է:<br><br>2. Օրենքների նախագծերի փաթեթն արժանացել է Կառավարության հավանությանը: | | ՀՀ ազգային անվտանգության ծառայություն | ոստիկանական ուժերով պետական պահպանության ենթակա օբյեկտների դասակարգման սկզբունքները: Ցանկից դուրս բերված օբյեկտների պահպանությունը վերապահվել է մասնավոր պահնորդական ընկերություններին կամ նախատեսվել է պահպանության այլ եղանակ:<br><br>Ելակետային՝ 0:<br><br>2. «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» և «Ոստիկանության մասին» օրենքներում փոփոխությունների նախագծին հավանություն տալու վերաբերյալ Կառավարության որոշումն ընդունվել է: Օրենքների նախագծերի փաթեթով վերանայվել են մասնավոր պահնորդական գործունեության իրականացման չափանիշները, ներառյալ՝ լիցենզավորման պահանջները:<br><br>3. Օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ անցկացվել է առնվազն 1 հանրային քննարկում: | |

**Ուղղություն 9՝ Մարդու իրավունքների պաշտպանության զգայուն հարցեր**

**Խնդիր՝ Ոստիկանության գործունեության շրջանակներում մարդու իրավունքների պաշտպանության զգայուն հարցերին առնչվող բարելավման ենթակա կարգավորումների, գործիքակազմի և տեխնիկական միջոցների առկայություն**

**Թիրախ՝ Ոստիկանական ծառայության շրջանակներում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության պատշաճ ապահովում**

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ազատությունից զրկված անձանց իրավունքների երաշխավորում, վատ վերաբերմունքի կանխարգելում | | | | | | |
| | 1.1. «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ամբողջությամբ նոր օրենքի մշակում | | Առաջին կիսամյակ՝<br><br>Մշակվել և Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին նոր օրենքի նախագիծ:<br><br>Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Օրենքի նախագիծն արժանացել է Կառավարության հավանությանը:<br><br>2. Մշակվել են օրենքի կիրառումն ապահովող անձնակազմի վերապատրաստման նյութերը: | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Վերապատրաստ-վել է օրենքի կիրառումն ապահովող անձնակազմի առնվազն 70%-ը: | ՀՀ արդարադատու-թյան նախարարություն,<br><br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն,<br><br>ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնու-թյամբ),<br><br>ՀՀ քննչական կոմիտե (համաձայնու-թյամբ),<br><br>ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնու-թյամբ),<br><br>ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ (համաձայնու-թյամբ) | 1. «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» նոր օրենքի նախագծին հավանություն տալու վերաբերյալ Կառավարության որոշումն ընդունվել է: Օրենքի նախագիծն ամբողջությամբ համապատասխանում է միջազգային ստանդարտներին:<br><br>2. Օրենքի նախագծի վերաբերյալ անցկացվել է առնվազն 3 հանրային քննարկում, ընդունվել է առաջարկությունների առնվազն 30%-ը:<br><br>3. Օրենքի կիրառումն ապահովող անձնակազմերի առնվազն 70%-ը վերապատրաստվել է: Վերապատրաստումների ավարտին անցկացված գիտելիքների գնահատման արդյունքում վերապատրաստվածները միջինում դրսևորել են առնվազն 80% իմացություն:<br><br>Ելակետային՝ 0: | Լրացուցիչ ֆինանսա-վորում չի պահանջ-վում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 1.2. Ազատությունից զրկված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի ենթադրյալ դեպքերի արձանագրման մեխանիզմի ներդնում՝ Ստամբուլյան արձանագրությանը համահունչ | Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Մշակվել է ազատությունից զրկված անձանց նկատմամբ ենթադրյալ վատ վերաբերմունքի դեպքերի արձանագրման առնչությամբ ՆԳՆ կարողությունները բարելավելու վերաբերյալ գնահատման զեկույցը:<br><br>2. Զեկույցի հիման վրա մշակվել և Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքում փոփոխությունների նախագիծը:<br><br>3. Պիլոտային կարգով կիրառման նպատա-կով ՆԳ նախարարի հրամանով հաստատվել է վատ վերաբերմունքի ենթադրյալ դեպքի արձանագրման | Առաջին կիսամյակ՝<br><br>1. Օրենսդրական փոփոխություն-ների նախագիծն արժանացել է Կառավարության հավանությանը:<br><br>2. Զեկույցի հիման վրա հաստատվել են վատ վերա-բերմունքի ենթադրյալ դեպքի արձանագրման ձևաթուղթը և դրա լրացման ուղեցույցը: | | ՀՀ առողջապահության նախարարություն,<br><br>ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնու-թյամբ),<br><br>ՀՀ քննչական կոմիտե (համաձայնու-թյամբ),<br><br>ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ (համաձայնու-թյամբ) | 1. Ազատությունից զրկված անձանց նկատմամբ ենթադրյալ վատ վերաբերմունքի դեպքերի արձանագրման առնչությամբ ՆԳՆ կարողությունները բարելավելու վերաբերյալ գնահատման զեկույցը մշակվել է:<br><br>2. «Ձերբակալված և կալանա-վորված անձանց պահելու մասին» օրենքում փոփոխությունների նախագծին հավանություն տալու վերաբերյալ Կառավարության որոշումն ընդունվել է: Նախագծով նախատեսվել են վատ վերաբեր-մունքի ենթադրյալ դեպքի արձանագրման ձևաթուղթը կազմելու դեպքերը, դրա փոխանցման և պահպանման կարգը, ինչպես նաև սահմանվել է ձևաթուղթը և դրա լրացման ուղեցույցը հաստատելու լիազորող նորմ:<br><br>3. Զեկույցի հիման վրա մշակված՝ վատ վերաբերմունքի ենթադրյալ դեպքի արձանագրման ձևաթուղթը և դրա լրացման ուղեցույցը հաստատվել են: Վատ վերաբեր-մունքի ենթադրյալ ցանկացած դեպքի արձանագրումն իրականացվում է բացառապես ձևաթղթի կիրառմամբ:<br><br>Ելակետային՝ 0: | Օրենքով չարգելված միջոցներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ճնաթուղթը և դրա լրացման ուղեցույցը: | | | | | |
| | 1.3. Ոստիկանության ստորաբաժանումների տեսահսկման համակարգով ապահովում | | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Տեսահսկման համակարգը գործարկվել է Ոստիկանության ստորաբաժանումն երի առնվազն 50%-ում: | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Տեսահսկման համակարգը գործարկվել է Ոստիկանության բոլոր ստորա-բաժանումների համար: | | Ոստիկանության բոլոր ստորա-բաժանումները (բաժիններ, ՁՊՎ-ներ) փուլային սկզբունքով զինվել են միասնական տեսահսկման համակարգով, որը պետք է լինի կենտրոնացված, կառավարվի մեկ կետից՝ բացառելով առանձին ստորաբաժանումների կողմից տեսահսկման համակարգի կառավարման հնարավորությունը, և որի շրջանակներում պետք է առնվազն ներառվի մուտքերի, ելքերի և բոլոր ընդհանուր տարածքների տեսահսկումը՝ տեսանկարահանված նյութերի՝ հստակ սահմանված ժամկետներում կենտրոնացված պահպանմամբ:<br><br>Ելակետային՝ 0: | Տարեկան բյուջեով նախատես-ված միջոցներ |
| | 1.4. Ազատությունից զրկված անձանց տեղափոխման համար անհրաժեշտ պայմաններ նախատեսող տրանսպորտային միջոցների ձեռքբերում | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Ձեռք է բերվել 22 տրանսպորտային միջոց, որոնցից 1-ը՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված է: | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Ձեռք է բերվել ևս 22 տրանսպոր-տային միջոց, որոնցից 1-ը՝ հաշմանդամու-թյուն ունեցող անձանց համար հարմարեցված է: | | | 1. Ոստիկանության ուղեկցող անձնակազմի կողմից ազատու-թյունից զրկված անձանց տեղափոխումը կազմակերպելու համար ձեռք է բերվել պատշաճ կահավորված 44 տրանսպորտային միջոց, որոնցից առնվազն 2-ը հարմարեցված է հաշմանդա-մություն ունեցող անձանց համար:<br><br>Ելակետային՝ 0: | Տարեկան բյուջեով նախատես-ված միջոցներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 1.5. Բերման ենթարկվող անձանց իրենց հասկանալի լեզվով իրավունքների մասին գրավոր ծանուցումների տրամադրման ապահովում | | Առաջին կիսամյակ՝<br><br>Իրավունքների մասին գրավոր ծանուցումները թարգմանվել են ևս 5 լեզվով: | | | Իրավունքների մասին գրավոր ծանուցումները թարգմանվել են 10 լեզվով:<br><br>Ելակետային՝ ծանուցումները թարգմանված են 5 լեզվով: | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| | 1.6. Խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքի թեմայով վերապատրաստումների անցկացում | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Պիլոտային կարգով կիրառման նպատակով ՆԳ նախարարի հրամանով հաստատված՝ վատ վերաբերմունքի ենթադրյալ դեպքի արձանագրման ձևաթղթի և դրա լրացման ուղեցույցի հիման վրա վերապատրաստվել է ոստիկանության և շտապօգնության համապատասխան անձնակազմից 50-ական անձ: | Առաջին կիսամյակ՝<br><br>1. Մշակվել և ներդրվել է ՄԱԿ Խոշտանգումների դեմ պայքարի կոնվենցիայի և Ստամբուլի արձանագրության վերաբերյալ իրականացվող վերապատրաստումների և դասընթացների որակը գնահատելու հատուկ մեթոդաբանություն:<br><br>2. Մշակվել են խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի վերաբերյալ վերապատրաստման նյութերը: | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Վերապատրաստվել է ոստիկանության, քննչական կոմիտեի, շտապօգնության համապատասխան անձնակազմի 100%-ը: | ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ (համաձայնությամբ) | 1. Խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի վերաբերյալ վերապատրաստման նյութերը մշակվել են և համապատասխանում են միջազգային չափանիշներին:<br><br>2. Ոստիկանության, քննչական կոմիտեի, շտապօգնության համապատասխան անձնակազմի 100%-ը վերապատրաստվել է խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի թեմայով: Վերապատրաստումների ավարտին իրականացված գիտելիքների գնահատման արդյունքներով վերապատրաստվածները միջինում դրսևորել են առնվազն 80% իմացություն:<br><br>Ելակետային՝ ՄԻՊ աշխատակազմի կողմից իրականացվել են ոստիկանության ծառայողների վերապատրաստումներ:<br><br>3. Մշակվել և ներդրվել է հատուկ մեթոդաբանություն՝ գնահատելու ՄԱԿ Խոշտանգումների դեմ | Օրենքով չարգելված միջոցներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Վերապատրաստ-վել է ոստիկանու-թյան, քննչական կոմիտեի, շտապօգնության համապատաս-խան անձնակազմի առնվազն 60%-ը: | | | պայքարի կոնվենցիայի և Ստամբուլի արձանագրության վերաբերյալ իրականացվող վերապատրաստումների և դասընթացների որակը՝ ապահովելու, որ թեմատիկ դասընթացները հիմնված են թիրախային խմբերի կարիքների վրա:<br><br>Ելակետային՝ 0: | |
| | 1.7. Ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի գործունեության վերայանված կարգի ամբողջական կիրառման ապահովում | | Առաջին կիսամյակ՝<br><br>1. Հասարակական դիտորդների խմբի կազմում նոր անդամները ներգրավվում են «Ներքին գործերի նախարարության ոստիկանության համակարգում գործող ձերբակալված-ներին պահելու վայրերում և ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական | | ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ (համաձայնու-թյամբ) | 1. Նոր ընթացակարգով ձևավորված հասարակական դիտորդների խումբը գործում է:<br><br>2. Հասարակական դիտորդների խմբի անդամների վերապատ-րաստման նյութերը մշակվել են՝ միջազգային չափանիշներին համապատասխան:<br><br>3. Հասարակական դիտորդների խմբի բոլոր անդամները վերապատրաստվել են:<br><br>Ելակետային՝ 0, 2025 թ.՝ 100%: | Օրենքով չարգելված միջոցներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | դիտորդների խմբի կազմավորման և հասարակական վերահսկողության իրականացման կարգը սահմա-նելու մասին» ՆԳ նախարարի հրամանով սահմանված կարգով:<br><br>2. Մշակվել են հասարակական դիտորդների խմբի անդամների վերապատրաստ-ման նյութերը:<br><br>3. Իրականացվել է հասարակական դիտորդների խմբի բոլոր անդամների վերապատրաս-տում: | | | | |
| 2. | Ընտանեկան և կենցաղային բռնության, ինչպես նաև երեխաների նկատմամբ բռնության կանխարգելում, բռնության ենթարկված անձանց պաշտպանության երաշխավորում | | | | | | |
| | 2.1. «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի փոփոխությունների | | Առաջին կիսամյակ՝<br><br>1. Մշակվել և հաստատվել է | | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, | 1. Կանխարգելիչ հաշվառման շրջանակում անչափահաս անձի կողմից ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրելը կանխարգելելու նկատմամբ | Լրացուցիչ ֆինանսա-վորում չի պահանջ-վում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | կիրարկման համար անհրաժեշտ իրավական դաշտի ապահովում | | կանխարգելիչ հաշվառման շրջանակում անչափահաս անձի կողմից ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրելը կանխարգելելու նկատմամբ մշտադիտարկման կարգը:<br><br>2. Մշակվել և ընդունվել է ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի հայտնաբերման, ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց ուղղորդման, ընտանեկան և կենցաղային բռնության դեպքի կրկնման ռիսկի գնահատման կարգը: | | ՀՀ առողջապահության նախարարություն,<br><br>ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնու-թյամբ),<br><br>ՀՀ քննչական կոմիտե (համաձայնու-թյամբ) | մշտադիտարկման կարգը հաստատելու մասին ՆԳ նախարարի հրամանն ընդունվել է:<br><br>2. Ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի հայտնա-բերման, ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց ուղղորդման, ընտանեկան և կենցաղային բռնության դեպքի կրկնման ռիսկի գնահատման կարգը հաստատելու մասին Կառավարության որոշումն ընդունվել է:<br><br>Ելակետային՝ 0: | |
| | 2.2. Ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց, ինչպես նաև բռնության ենթարկված երեխաների հետ պատշաճ | | Առաջին կիսամյակ՝<br><br>1. Մշակվել են բռնության | | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, | 1. Մշակվել են աշխատանքային ուղեցույցներ բռնության ենթարկված անձանց և երեխաների, այդ թվում՝ բռնությանն ականատես | Օրենքով չարգելված միջոցներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | հաղորդակցության և անվտանգության ապահովում | | ենթարկված երեխաների հետ հաղորդակցությա ն վերաբերյալ ուղեցույցներ:<br><br>2. «Ընտանեկան և կենցաղային բռնության կան-խարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտ-պանության մասին» օրենքում փոփոխություն-ների նախագիծն արժանացել է Կառավարության հավանությանը:<br><br>Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Մշակվել և հաստատվել են ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց հետ աշխատելու, այդ թվում՝ կացարաններ տեղափոխելու վերաբերյալ | | ՀՀ առողջապահության նախարարություն | երեխաների, հետ հաղորդակ-ցության շրջանակներում զոհակենտրոն և գենդերազգայուն մոտեցումներ ապահովելու, նրանց խնդիրները պատշաճ արձանա-գրելու և գնահատելու վերաբերյալ: Ուղեցույցները ներառում են առանձին թեմաներ սեռական բռնության ենթարկված երեխաների հետ հաղորդակցության վերաբերյալ:<br><br>2. Ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց հետ աշխատելու, այդ թվում՝ կացարաններ տեղափոխելու վերաբերյալ անվտանգային արձանագրություններ ընդունելու, ինչպես նաև առավել տարածված ահազանգերով ու դեպքերով ոստիկանության ծառայողների ստանդարտ գործառնական ընթացակարգերը հաստատելու՝ Ներքին գործերի նախարարի լիազորությունը սահմանող օրենսդրական փոփոխությունների նախագծին հավանություն տալու վերաբերյալ Կառավարության որոշումն ընդունվել է:<br><br>3. Արձանագրությունները հաստատելու մասին Ներքին գործերի նախարարի հրամանն ընդունվել է:<br><br>4. Առավել տարածված ահազանգերով ու դեպքերով ոստիկանության ծառայողների | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | անվտանգային արձանագրություն ները:<br><br>2. Մշակվել և հաստատվել են առավել տարածված ահազանգերով ու դեպքերով ոստիկանության ծառայողների ստանդարտ գործառնական ընթացակարգերը: | | | ստանդարտ գործառնական ընթացակարգերը հաստատելու մասին ՆԳ նախարարի հրամանն ընդունվել է:<br><br>Ելակետային 0: | |
| | 2.3. Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում ոստիկանության իրավասու ծառայողների վերապատրաստումների ապահովում | | Առաջին կիսամյակ՝<br><br>1. Մշակվել և հաստատվել է ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում ոստիկանության իրավասու ծառայողների վերապատրաս-տումների կարգը: | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Ընտանեկան և կենցաղային բռնության թեմայով վերապատրաստ-վել է պարեկային ծառայողների ևս 20%-ը: | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 1. Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում ոստիկանության իրավասու ծառայողների վերապատրաս-տումների կարգը հաստատելու մասին ՆԳ նախարարի հրամանն ընդունվել է:<br><br>2. Մոդուլները վերանայված են և ներառում են գենդերազգայուն ու զոհակենտրոն հաղորդակցությանն առնչվող թեմաներ:<br><br>Ելակետային՝ 0:<br><br>3. Համայնքային ոստիկանների 100%-ը վերապատրաստվել է | Լրացուցիչ ֆինանսա-վորում չի պահանջ-վում |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 2. Վերանայվել են վերապատրաստ-ման մոդուլները:<br><br>Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Ընտանեկան և կենցաղային բռնության թեմայով վերապատրաստ-վել է համայնքային ոստիկանների 100%-ը:<br><br>2. Ընտանեկան և կենցաղային բռնության թեմայով վերա-պատրաստվել է պարեկային ծառայողների 20%-ը:<br><br>3. Ընտանեկան և կենցաղային բռնության թեմայով վերա-պատրաստվել է Ներքին գործերի նախարարության իրավաբանական վարչության իրավասու ամբողջ անձնակազմը: | | | ընտանեկան և կենցաղային բռնության թեմայով:<br><br>Ելակետային՝ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի աջակցությամբ ընտանեկան և կենցաղային բռնության թեմայով իրականացվել է 1800 ոստիկանության ծառայողի մեկօրյա վերապատրաստում:<br><br>4. Պարեկային ծառայողների 40%-ը վերապատրաստվել է ընտանեկան և կենցաղային բռնության թեմայով:<br><br>Ելակետային՝ 0:<br><br>5. Ներքին գործերի նախարարության իրավաբանական վարչության իրավասու ամբողջ անձնակազմը վերապատրաստվել է ընտանեկան և կենցաղային բռնության թեմայով:<br><br>Ելակետային՝ 0: | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 3. | Անձնական տվյալների պաշտպանության իրավունքի ապահովում | | | | | | |
| | 3.1. Ոստիկանական գործողություններ իրականացնելիս անձնական տվյալների պաշտպանության ուղեցույցի կիրառում | | Առաջին կիսամյակ՝<br><br>Մշակվել է ոստիկանական գործողություններ իրականացնելիս անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ ուղեցույց:<br><br>Երկրորդ կիսամյակ<br><br>Վերապատրաստ-վել է ոստիկա-նական բաժին-ների, ՕԿԿ ղեկավար անձնակազմի առնվազն 30%-ը և մնացած անձնակազմի առնվազն 40%-ը: | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Վերապատրաստ-վել է ոստիկա-նական բաժին-ների, ՕԿԿ ղեկավար անձնակազմի ևս 50%-ը և մնացած անձնակազմի ևս 60%-ը: | ՀՀ արդարադատու-թյան նախարարություն | 1. Ոստիկանական գործողու-թյուններ իրականացնելիս անձնական տվյալների պաշտպանության ուղեցույցը մշակվել է և մատչելի է:<br><br>Ելակետային՝ 0:<br><br>2. Ուղեցույցի և «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի վերաբերելի կարգավորումների համադրված կիրառմամբ իրականացվել են վերապատ-րաստումներ: Վերապատրաստվել է ոստիկանական բաժինների, ՕԿԿ ղեկավար կազմի առնվազն 80%-ը և մնացած անձնակազմի 100%-ը:<br><br>Ելակետային՝ 0: | Օրենքով չարգելված միջոցներ |
| | 3.2. Ոստիկանական գործողություններ իրականացնելիս անձնական տվյալների պաշտպանության առերևույթ խախտումների առնչությամբ քաղաքացիների արձագանքի օպերատիվ ստացման մեխանիզմի գործարկում | | Առաջին կիսամյակ՝<br><br>Կատարվել է քաղաքացիների արձագանքի օպերատիվ | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Առաջարկություն-ների համաձայն՝ գործարկվել է քաղաքացիների | ՀՀ արդարադատու-թյան նախարարություն | 1. Քաղաքացիների արձագանքի օպերատիվ ստացման մատչելի մեխանիզմների վերաբերյալ ուսումնասիրության արդյունքներով մշակվել է նախընտրելի մոդելի վերաբերյալ առաջարկություններ ներառող զեկույց: | Լրացուցիչ ֆինանսա-վորում չի պահանջ-վում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ստացման մեխանիզմների վերաբերյալ միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություն, ինչի հիման վրա ներկայացվել են մեխանիզմի ներդրման եղանակի վերաբերյալ առաջարկություններ: | արձագանքի օպերատիվ ստացման մատչելի մեխանիզմը: | | Ուսումնասիրությունը կատարվել է առնվազն 3 պետության լավագույն փորձի ուսումնասիրության հիման վրա:<br><br>2. Քաղաքացիների արձագանքի օպերատիվ ստացման մատչելի մեխանիզմը գործարկվել է:<br><br>Ելակետային՝ 0: | |
| **Ուղղություն 10՝ Բարեփոխումների իրականացման ներառականություն, գործողությունների մշտադիտարկում և համակարգում**<br>**Խնդիր՝ Ոստիկանության մասին հանրային կարծիքի, վստահության և բարեփոխումների արդյունավետ մշտադիտարկման խնդիրներ**<br>**Թիրախ՝ Բարեփոխումների իրականացումը մշտադիտարկող և գնահատող գործիքակազմերի պատշաճ կիրառում** | | | | | | | |
| 1. | Ոստիկանության բարեփոխումների մշտադիտարկման և գնահատման արդյունավետ մեխանիզմի ապահովում՝ հասարակական կազմակերպություն-ների ներգրավմամբ | Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Մշակվել և հաստատվել է Ոստիկանության բարեփոխումների մշտադիտարկման և գնահատման համակարգող խորհրդի գործունեության կարգը: | Առաջին կիսամյակ՝<br><br>Անցկացվել է համակարգող խորհրդի 1 նիստ:<br><br>Երկրորդ կիսամյակ՝<br><br>Անցկացվել է համակարգող խորհրդի 1 նիստ: | Առաջին կիսամյակ՝<br><br>Անցկացվել է համակարգող խորհրդի 1 նիստ:<br><br>Երկրորդ կիսամյակ՝<br><br>Անցկացվել է համակարգող խորհրդի 1 նիստ: | - | 1. Ոստիկանության բարեփո-խումների մշտադիտարկման և գնահատման համակարգող խորհրդի գործունեության կարգը հաստատելու մասին Կառավարու-թյան որոշումն ընդունվել է:<br><br>2. Ընդունվել է հաշվետվությունների ներկայացման ձևաչափը:<br><br>Ելակետային՝ 0:<br><br>3. Անցկացվել  է համակարգող խորհրդի 4 նիստ: | Լրացուցիչ ֆինանսա-վորում չի պահանջ-վում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2. Մշակվել և հաստատվել է հաշվետվությունների ներկայացման ձևաչափը: | | | | Ելակետային՝ 0: | |
| 2. | Ոստիկանության բարեփոխումների իրականացման միջգերատեսչական աշխատանքային խմբի գործունեության շարունակականության ապահովում | Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Իրականացվել է միջգերատեսչական աշխատանքային խմբի առնվազն ամսական 1 հանդիպում:<br><br>2. Ոլորտային աշխատանքային ենթախմբերը շարունակում են գործել: | Առաջին և երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Իրականացվել է միջգերատեսչա-կան աշխատան-քային խմբի առնվազն ամսական 1 հանդիպում:<br><br>2. Ոլորտային աշխատանքային ենթախմբերը շարունակում են գործել: | Առաջին և երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Իրականացվել է միջգերատեսչա-կան աշխատան-քային խմբի առնվազն ամսական 1 հանդիպում:<br><br>2. Ոլորտային աշխատանքային խմբերը շարունակում են գործել: | - | Իրականացվել է միջգերատեսչական աշխատանքային խմբի առնվազն ամսական 1 հանդիպում: Միջգերատեսչական աշխատան-քային խումբը շարունակում է իր գործունեությունը՝ դիտարկելով ընթացիկ իրավիճակը, ներկայացնելով առաջարկություններ:<br><br>Ելակետային՝ 1 հանձնաժողով, ոլորտային ենթախմբեր: | Լրացուցիչ ֆինանսա-վորում չի պահանջ-վում |

**Ուղղություն 11՝ Հանրային ընկալում, ռազմավարական հաղորդակցություն**

**Խնդիր՝ Ոստիկանության մասին հանրային կարծիքի, վստահության և հանրային հաղորդակցության դեռևս ոչ բավարար մակարդակ**

**Թիրախ՝ Ոստիկանության ծառայության հանդեպ վստահության բարձրացում**

**Սկզբնական աստիճան՝ Հանրային կարծիքի և վստահության հարցում. ելակետային 2023 թ.՝ 62% գոհունակության ցուցանիշ՝ ըստ Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) կատարած հետազոտության, թիրախ՝ 2026 թ. – առնվազն՝ 72%**

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ոստիկանության բարեփոխումների իրականացման ռազմավարական հաղորդակցություն | Երկրորդ կիսամյակ՝ | Առաջին կիսամյակ՝ | Առաջին կիսամյակ՝ | - | 1. Մշակվել է Ոստիկանության բարեփոխումների ռազմավա-րական հաղորդակցության | Օրենքով չարգելված միջոցներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1. Մշակվել է Ոստիկանության բարեփոխումների ռազմավարական հաղորդակցության ծրագիրը:<br><br>2. Իրականացվել է կանանց ներգրավ-վածության բարձրացմանն ուղղված առնվազն 1 հաղորդակցության արշավ:<br><br>3. Մշակվել է առնվազն 5 հանրային իրազեկման նյութ: | 1. Հաստատվել է Ոստիկանության բարեփոխումների ռազմավարական հաղորդակցու-թյան ծրագիրը:<br><br>2. Իրականացվել է կանանց ներգրավվածու-թյան բարձրաց-մանն ուղղված առնվազն 1 հաղորդակցու-թյան արշավ:<br><br>Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Մշակվել է առնվազն 10 հանրային իրազեկման նյութ:<br><br>2. Ոստիկա-նության բարեփո-խումների ընթացքի վերաբերյալ հեռարձակվել է առնվազն 10 հեռուստահաղորդ ում և հանրային բանավեճ: | Իրականացվել է կանանց ներգրավ-վածության բարձրացմանն ուղղված առնվազն 1 հաղորդակ-ցության արշավ:<br><br>Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Մշակվել է առնվազն 10 հանրային իրազեկման նյութ:<br><br>2. Ոստիկա-նության բարեփոխումների ընթացքի վերաբերյալ հեռարձակվել է առնվազն 10 հեռուստահաղոր-դում և հանրային բանավեճ: | | ծրագիրը, հաստատելու մասին ՆԳ նախարարի հրամանն ընդունվել է:<br><br>Ելակետային՝ 0:<br><br>2. Իրականացվել է ոստիկանության համակարգում կանանց ներգրավվածության բարձրացմանը միտված առնվազն 3 հաղորդակ-ցության արշավ:<br><br>Ելակետային՝ 1:<br><br>3. Ոստիկանության բարեփոխումների ընթացքի վերաբերյալ մշակվել և հրապարակվել է առնվազն 25 հանրային իրազեկման նյութ:<br><br>Ելակետային՝ 0:<br><br>4. Ոստիկանության բարեփոխումների ընթացքի վերաբերյալ հեռարձակվել է առնվազն 20 հեռուստահաղորդում և հանրային բանավեճ՝ ներառյալ մարզային հեռուստատեսությունների միջոցով: | |
| 2. | Հանրային վստահության մակարդակի և ոստիկանության միջոցառումների ազդեցության գնահատում | | Առաջին կիսամյակ՝ | Երկրորդ կիսամյակ՝ | - | 1. Հանրային վստահության մակարդակի և ոստիկանության միջոցառումների ազդեցության | Օրենքով չարգելված միջոցներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Մշակվել են հանրային հարցումների իրականացման մեթոդաբանու-թյունն ու հարցաշարը<br><br>Երկրորդ կիսամյակ՝<br><br>Անցկացվել է առնվազն 1 հանրային հարցում: | Անցկացվել է առնվազն 1 հանրային հարցում: | | գնահատման վերաբերյալ պարբերական հարցումների իրականացման մեթոդաբա-նությունն ու հարցաշարը մշակվել են:<br><br>Ելակետային՝ 0:<br><br>2. Անցկացվել է տարեկան առնվազն 1 հանրային հարցում՝ պատվիրակման միջոցով:<br><br>Ելակետային՝ պատվիրակման միջոցով անցկացվել է 2 հարցում: | |
| 3. | Ներքին գործերի նախարարության, Ոստիկանության հանրային հաղորդակցության գործիքակազմի զարգացում | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Գնահատվել են Ներքին գործերի նախարարության Հանրային հաղոր-դակցության և իրազեկման վարչության տեխնիկական կարիքները, որի հիման վրա մշակվել է տեխնիկական կարիքների ցանկը: | Առաջին կիսամյակ՝<br><br>1. Մշակվել են Ներքին գործերի նախարարության Հանրային հաղոր-դակցության և իրազեկման վարչության անձնակազմի վերապատրաստ-ման նյութերը:<br><br>2. Մշակվել և հաստատվել է Ներքին գործերի նախարարության հանրային հաղոր-դակցության ռազ-մավարությունը: | Երկրորդ կիսամյակ<br><br>1. Վերապատ-րաստվել է Ներքին գործերի նախարարության Հանրային հաղոր-դակցության և իրազեկման վարչության անձնակազմի ևս 70%-ը:<br><br>2. Հասցեագրվել է Ներքին գործերի նախարարության Հանրային հաղոր-դակցության և իրազեկման վարչության | - | 1. Ներքին գործերի նախա-րարության հանրային հաղորդակ-ցության ռազմավարությունը հաստատող՝ Ներքին գործերի նախարարի հրամանն ընդունվել է: Ռազմավարությամբ նախատեսվել է Ոստիկանության հաղորդակցության նոր մեթոդաբանության մշակումը:<br><br>Ելակետային՝ առկա չէ հաղորդակցության ռազմավարություն:<br><br>2. Հաստատվել են Ներքին գործերի նախարարության նոր հեռուստա-հաղորդաշարի ֆորմատները՝ Հերթապահ մասի, 02-ի փոխարեն:<br><br>Ելակետային՝ հեռարձակվում է ոստիկանության ոլորտի 2 | Օրենքով չարգելված միջոցներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Մշակվել և հաստատվել է Ներքին գործերի նախարարության հեռուստահա-ղորդաշարի նոր ֆորմատները:<br><br>2. Ներքին գործերի նախարարության և ենթակա պետական մարմինների պաշտոնական կայքերը բարելավվել են և համալրվել են մատչելիություն ապահովող գործիքակազմով:<br><br>3. Վերապատ-րաստվել է Ներքին գործերի նախարարության Հանրային հաղորդակցու-թյան և իրազեկման վարչության անձնակազմի 30%-ը: | տեխնիկական կարիքների առնվազն 30%-ը: | | հաղորդաշար:<br><br>3. Ներքին գործերի նախարա-րության և ենթակա պետական մարմինների պաշտոնական կայքերը բարելավվել են, համալրվել են գործիքակազմով, որն ապահովում է նաև կայքերի մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց  համար:<br><br>Ելակետային՝ գործում են կայքէջեր:<br><br>4. Ներքին գործերի նախարարության Հանրային հաղորդակցության և իրազեկման վարչության ամբողջ անձնակազմը վերապատրաստվել է:<br><br>Ելակետային՝ 0:<br><br>5. Մշակվել է Ներքին գործերի նախարարության Հանրային հաղորդակցության և իրազեկման վարչության տեխնիկական կարիքների ցանկը: Հասցեագրվել է ցանկով նախատեսված կարիքների առնվազն 30%-ը:<br><br>Ելակետային՝ 0: | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Ուղղություն 12՝ Ոստիկանություն բարեփոխումների շրջանակներում միջազգային համագործակցություն**<br><br>**Խնդիր՝ Ոստիկանության՝ ոչ լիարժեք մասնակցություն/անդամակցություն/համագործակցություն միջազգային հարթակներում, ոստիկանության միջազգային իմիջի ու միջազգային գնահատումների ոչ բավարար մակարդակ**<br><br>**Թիրախ՝ Կովկասյան բարոմետրի հարցումների արդյունքներով ՀՀ ոստիկանության նկատմամբ վստահության աստիճանի բարձրացում**<br><br>**Սկզբնական աստիճան՝ 2022թ - 20.6% (ամբողջական և մասնակի վստահության համախառն ցուցիչ), 2027թ – 40%** | | | | | | | |
| 1. | Բարեփոխումների շրջանակներում միջազգային գործընկերների հետ համագործակցության ընդլայնում | | Առաջին կիսամյակ՝<br><br>1. Կազմակերպվել է դոնորների համակարգման 1 հանդիպում:<br><br>2. Լրամշակվել և միջազգային գործընկերներին է ներկայացվել դոնորների համակարգման մատրիքսը:<br><br>Երկրորդ կիսամյակ՝<br><br>Կազմակերպվել է դոնորների համակարգման 1 հանդիպում: | Առաջին կիսամյակ՝<br><br>Կազմակերպվել է դոնորների համակարգման 1 հանդիպում:<br><br>Երկրորդ կիսամյակ՝<br><br>Կազմակերպվել է դոնորների համակարգման 1 հանդիպում: | - | 1. Գործողությունների ծրագրի ֆինանսավորման կարիքների հաշվառմամբ դոնորների համակարգման մատրիքսը լրամշակվել է և ներկայացվել զարգացման միջազգային գործընկերների համակարգման հանդիպումներում:<br><br>Ելակետային՝ դոնորների համակարգման մատրիքսը մշակված է:<br><br>2. Կազմակերպվել 4 համակարգող հանդիպում:<br><br>Ելակետային՝ 2023 թվականին անցկացվել է 1 համակարգող հանդիպում: | Լրացուցիչ ֆինանսա-վորում չի պահանջ-վում |
| 2. | Միջազգային վարկանիշներում Ոստիկանության ընթացիկ դիրքերի | Երկրորդ կիսամյակ՝ | Առաջին կիսամյակ՝ | Առաջին կիսամյակ՝ | - | 1. Միջազգային վարկանիշներում Ոստիկանության ընթացիկ դիրքերի բարելավման վրա ազդող | Լրացուցիչ ֆինանսա-վորում չի |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | բարելավման վրա ազդող գործոնների մշտադիտարկում | 1. Իրականացվել է միջազգային վարկանիշներում ոստիկանության ընթացիկ դիրքերի բարելավման վրա ազդող գործոնների վերհանման և խնդիրների քարտեզագրման նպատակով ուսումնասիրություն:<br><br>2. Ուսումնասիրության հիման վրա մշակվել է կիսամյակային գործողությունների ծրագիր: | 1. Իրականացվել է միջազգային վարկանիշներում ոստիկանության ընթացիկ դիրքերի բարելավման առաջընթացի ուսումնասիրություն:<br><br>2. Ուսումնասի-րության հիման վրա մշակվել է կիսամյակային գործողությունների ծրագիր:<br><br>Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Իրականացվել է միջազգային վարկանիշներում ոստիկանության ընթացիկ դիրքերի բարելավման առաջընթացի ուսումնասիրություն:<br><br>2. Ուսումնասի-րության հիման վրա մշակվել է կիսամյակային գործողությունների ծրագիր:<br><br>3. Իրականացվել է 2025 թվականի կիսամյակային ծրագրերի | 1. Իրականացվել է միջազգային վարկանիշներում ոստիկանության ընթացիկ դիրքերի բարելավման առաջընթացի ուսումնասիրություն:<br><br>2. Ուսումնասի-րության հիման վրա մշակվել է կիսամյակային գործողությունների ծրագիր:<br><br>Երկրորդ կիսամյակ՝<br><br>1. Իրականացվել է միջազգային վարկանիշներում ոստիկանության ընթացիկ դիրքերի բարելավման առաջընթացի ուսումնասիրություն:<br><br>2. Ուսումնասի-րության հիման վրա մշակվել է կիսամյակային գործողությունների ծրագիր:<br><br>3. Իրականացվել է 2025 թվականի կիսամյակային ծրագրերի | | գործոնների վերհանում ու խնդիրների ուսումնասիրության հիման վրա մշակվել է խնդիրները քարտեզագրող զեկույց:<br><br>2. Քարտեզագրմամբ վերհանված խնդիրների հասցեագրման նպատակով, ինչպես նաև ընթացիկ առաջընթացի ուսումնասիրության հիման վրա մշակվել և հաստատվել է 5 գործողությունների ծրագիր:<br><br>Ելակետային՝ 0: | պահանջ-վում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | գործողությունների առնվազն 30%-ը: | գործողությունների առնվազն 30%-ը: | | | |
| 3. | Ոստիկանության միջազգային իմիջի ու նոր ոստիկանության կերպարի բարձրացմանն ուղղված հաղորդակցություն | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Իրականացվել է ոստիկանության ծառայողների 100%-ի իրազեկում կառուցված-քային փոփոխություն-ների և ֆունկցիոնալի հստակեցման մասին:<br><br>Առնվազն 1 միջազգային հարթակում ներկայացվել են ոստիկանության բարեփոխումներն ու գրանցված արդյունքները: | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Իրականացվել է ոստիկանության բարեփոխումների վերաբերյալ 1 լայնամասշտաբ կոնֆերանս:<br><br>Առնվազն 2 միջազգային հարթակում ներկայացվել են ոստիկանության բարեփոխումներն ու գրանցված արդյունքները: | Երկրորդ կիսամյակ՝<br><br>Իրականացվել է ոստիկանության բարեփոխումների վերաբերյալ 1 լայնամասշտաբ կոնֆերանս: | - | 1. Ոստիկանության ծառայողների 100 %-ը իրազեկվել է կառուցված-քային փոփոխությունների և ֆունկցիոնալի հստակեցման մասին:<br><br>2. 2024 թվականին՝ առնվազն 1, իսկ 2025-2026 թթ.՝ տարեկան կտրվածքով առնվազն 2 միջազ-գային հարթակում ներկայացվել են ոստիկանության բարեփոխումներն ու գրանցած արդյունքները:<br><br>3. Ոստիկանության բարեփո-խումների վերաբերյալ իրակա-նացվել է առնվազն 2 լայնա-մասշտաբ կոնֆերանս:<br><br>Ելակետային՝ 2024 թվականին իրականացվել է 1 միջազգային կոնֆերանս: | Օրենքով չարգելված միջոցներ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

19.11.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ